

ԱՐԱՅՐ

ԵՊԵՏՈՒԵՐՈՒԹԻՅԵՆ



ՎԵՆԵՏԻՆ

ՍՈՒՐԹ ԳԱԶԱՐ

85

Բ-30

W 52

1872 18th Dec

23rd Dec 1872

1872

M 4

Handwritten scribbles and faint markings, possibly including the number '184' on the left side.


ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКАЯ

184



Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն

ՄԱՆԿԱՆՑ



Ց

ՔԱՐԱՅԻ

ԱՊ ԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Unfed 258

2643-57

my 6.

7289

my 8

4469

47.

10 NOV 2011  
EROS JUL 85

8 1/2  
F-30

ՔԱՐԱՅԻ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

10008  
37583



ՎԵՆԵՏԻԿ  
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1853

N 51.

29 JUL 2013

363

780707

RECEIVED



38271


RECEIVED

RECEIVED

1953

W 21





8.

Cap. 84.

ЗУ.УНФ



# ՔԱՐԱՅՐ

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ



### ԳԼՈՒԽ Ա.

Երկու խաբէրայք .

ՇԱՏ ատեն չկայ որ Յակօբ ու Տօմկմաս անունով երկու կտրիճներ կային, սիրուն ու զուարթ տեսքով, բարձր հասակով, վառ վրուն բնութեամբ. որ բնական տուրք մը ունէին դիւրութեամբ բաներ գրտնելու ու զուարճութեամբ խօսելու ու լսողը զարմացրնելու: Բայց ի՞նչ օգուտ. աս պատուական ձիւղբերը աղիկի բանեցրնելու տեղը, սղախկուցմէ սկսեր էին գէշի վարժեցրնել, որով իրենց առաքինի ծնողացն ալ մեծ ցաւ ու մտմտութեան: Արչափ որ տարիքնին կ'աւելնար՝ այնչափ ալ իրենց

մոլորութիւնները առաջ կ'երթային . ամեն  
նեւին չէին ուզեր բանի գործքի հետ ըլլալ :  
Այնուհետեւ որ թէ աննուննին ելլայ , և թէ  
հանգիստ ու ինքիբ գլխունուն ասարին :  
Այդամ մը երբոր իրենց քաղաքը տնաւա  
ճառ եղաւ , գացին գաղտուկ արտաոց  
գրքեր գնեցին ու կարգացին . մերջը բա  
ւական բան սորվեցանք ըսելով , ծածուկ  
փախան իրենց գեղէն , գնացին հեռու  
տեղուանք ուր որ զիրենք ճանչցող չկար .  
ու հոն սկսան իրենց ծուռ ու մուռ գիտու  
թիւնները ծախել :

Ասանկով եղան աշէկ շատախօսներ ,  
վարպետ խօսքեր զուրցող , չըլլալու բաներ  
սլատմող , ծիծաղըրնող ծաղրածուններ . և  
աս իրենց խենթ ու խելառ խօսքերը անանկ  
համարձակութեամբ անանկ յարմարըրնե  
լով մը կ'ըսէին , որ սլարզամիտ մարդիկ  
զարմանալի բան մը տեսնալ ու ըսել կար  
ծելով՝ բերաննին բաց մտիկ կ'ընէին : Ա  
նոնք ալ բան չի մնաց որ չընէին իրենց  
բռնած անկարգ ճամբուն մէջ : Անեղձ ան  
խելքներ , ամենեւին չէին մտածեր որ որ մը  
չէնէ որ մը Ատուած աս գործքերուն հա  
մար զիրենք դատաստանի սխաի կանչէր :



Չէին մտածեր, թէ ինչ բանի համար ստեղծուեր են, մանաւանդ թէ կը ջանային իրենք զիրենք խաբել, ըսելով, թէ մարդ մը որ այսչափ յաջողութիւններ ունի՝ պէտքը չէ որ աս աշխարհքիս բարիքները ձեռքէ փախցընէ : Թէ որ յանկարծ մտքերնին աղէկ մտածմունք մը ինկնար, կամ Աստուած շնորհք մը տար, կընայէին որ մէկէն դուրս ձգեն, ու խղճմտանքէ ազատին : Բայց ասանկ մէկ մտքի վրայ ըլլալով արդեօք կը սիրէին մէկ զմէկ . չէ . հապա ինչպէս անկարգ մարդկանց սովորութիւնն է, երբեմն վէճ կ'ընէին, երբեմն ըրածնին մէկզմէկու երես կը զարնէին, ինչուան երբեմն ալ իրարու կը սպառնային, վերջը նորէն կը հաշտուէին երբոր խմելիքը դիմացնին գար . շիշն տեսածնուն պէս՝ ամէն բան կը մոռնային եղայր կը դառնային : Ասանկով քաղքէ քաղաք կ'երթային, ամէն տեղ տգէտ ժողովրդոց դիմացը առանց ամբնալու իրենց խաբէութիւնները կը բանեցընէին :

Մէկ օր մ'ալ պղտի գեղէ մը ելլալու ատեն՝ շատ մը գեղի խոտեր գնեցին որ ծախեն, բայց անձրևէ բռնուելով ծառի

մը տակ քաշուեցան : Ա՛հէկ մ'ալ տաս  
տիկ փոթորիկ մը փրթաւ , երկինք երկիր  
տակնու վրայ կ'ըլար . ասոնք մտածելով  
որ ստանկ առեն ծառի տակ կենալը խելք  
չէ , կայծակին վախէն փախան նեղուածք  
խանութի պէս տեղ մը , ուր որ մէկ քանի  
աշխատատեղներ կային , ու անոնց հետ  
ամբաժ կեցան : Հազիւ թէ անկէ հեռա-  
ցան՝ դարձեալ զարհուրելի որոտմունք մը  
եղաւ , ամէնքը վախերնէն վեր ցատքեցին ,  
բոլոր օդը լոյս կտրեցաւ , կայծակը ամ-  
պերուն մէջէն ցատքըրատելով գլորեցաւ ին-  
չաւ զարկաւ ան ծառը՝ որուն որ տակն  
քանի մը վայրկեան առաջ աս կտրիճ'ները  
կեցեր էին . ծառը կտոր կտոր եղաւ ,  
կրակն ալ փայլիլարով փայլիլարով կորսը-  
ւեցաւ : “ Բաղդերնիա բաներ է , ըսաւ  
Տօւլմաս ուրախութեամբ , աղէկ որ ան  
ծառէն հեռացանք , թէ որ քիչ մ'ալ տրն-  
տրնայինք՝ բաներնիս բուսած էր . Աս-  
տուած դիտէ եղեր որ մենք ուրիշներուն  
շատ օգնութիւններ պիտի ընենք , անոր  
համար մտքերնիս ձգեց որ անկէ փախ-  
չինք : Ի՞նչ կ'ըսես Հակոբ , , :

Հակոբ ոչ ծիծաղեցաւ ոչ պատասխան

տուաւ . Հասրա կը մտածէր թէ իրաւ ինչ  
մեծ վտանգէ ազատեցաւ , ու թէ որ ան  
վայրկեանին մէջ մեռնելու ըլլար 'նէ' ար-  
դեօք հոգին ինչ պիտի ըլլար իր մեղքերուն  
համար . “ Ա՛հ , արդեօք հիմայ ո՛ւր պիտի  
երթայիր , կ'ըսէր իր հողւոյն , թէ որ  
յանկարծ կայծակը դուրս ինջած ըլլար .  
անշուշտ դժոխքին մէջ , : Այս բանս մտա-  
ծելով երեսին գոյնը նետեց , ու դողալով  
Տօմասին ըրած կատակներուն վրայ գա-  
նիրը եկաւ : Տօմաս աս բանս տեսնա-  
լով , գնաց անոր քովը , թեէն բռնեց հար-  
ցուց , թէ ինչ բան ունիս . ու իմանալով  
անոր տրտմութիւնը՝ ուզեց փարատել .  
“ Ալիւր , ելիւր , եղբայր , ըսաւ . բան չի-  
կայ , փոթորիկն ալ անցաւ գնաց , երթանք  
սրկէ . երկու մղոն ճամբայ ընենք 'նէ մէկ  
գեղ մը կը հասնինք , պէտք չէ ատեն կոր-  
սընցընել , : Յակոբ ամօթէն ըլլայ վախէն  
ըլլայ մտքէն անցածը Տօմասին չի յայտ-  
նեց . երթանք , ըսաւ . ու մէկտեղ ճամբայ  
ինկան :

Վիշերը վրայ չհասած մտան այն գեղը ,  
կրբ աշխատաւորները իրենց գործքերնէն  
ետ կը դառնային . Այս յարմար ատեն է ,

ըսին , մեր առուտուրին . աղէկ բան կըր-  
նանք ձեռք ձգել : Գեղացիք ալ սա օ-  
տարականներուն վրայ զարմացած՝ մէկէն  
քովերնին եկան . մի տարակուսիք որ ա-  
ռուտուրը շատ յաջող եղաւ . բայց ինչպէս  
որ շուտ մը վաստրկեցան խաբերաները ա-  
նանկ ալ շուտ մը կորսընցուցին . վասն զի  
ստակը առածնուն պէս՝ գինետուն մը դա-  
ցին , բոլոր գիշերը խմելով անցուցին :  
Արկրորդ օրը դարձեալ նոյն տեղը դար-  
ձան . ուր որ քանի մը անխելքներ ասոնց  
ետենուն ինկած երեսպաշտութիւն կ'ը-  
նէին . իրենց փնտռածներն ալ միշտ ասանկ  
անկարգներն էր , վասն զի խելացի ծնողք  
թող չէին տար որ զաւակնին օտար մարդ-  
կանց հետ ընկերութիւն ընեն :

Գեղերու և դաշտերու մէջ ասոնց խենթ  
ու խելառ արհեստը աւելի կը բանէր ,  
բան թէ քաղաքներու մէջ . ինչու որ խեղճ  
աշխատաւորները տգէտ ըլլալով ամէն  
բան իրենց համար նոր էր , բաներնին  
գործքերնին կը թողուին՝ ու ասոնց բրած-  
նուն վրայ զմայլելով կը նայէին : Ամանք ,  
“ Իրաւընէ որ , կ'ըսէին , ասոնք մեր աշ-  
խարհքի մարդկանց չեն նմանիր ” : Ամանք

ալ, “ Ասոնք ուրիշ տեսակ մարդիկ պիտի  
ըլլան, կ'ըսէին, որովհետև խելքէ մտքէ  
չանցած բաներ կ'ընեն ”: Ա երջապէս  
չատոնք աս կարծիքին վրայ եղան որ՝ ա-  
սոնք սատանային հետ խօսքերնին մէկ են  
ըրեր, անով ասանկ բաներ կ'ընեն: Ասան-  
կով աս խեղճ մարդիկը զաս խաբեբաները  
ինչուան երկինք բարձրացուցին. ամէնքը  
իրենց փառք ու պատիւ կը սեպէին զանոնք  
իրենց տունը հրամցընել. իսկ որոնք որ  
չէին կրնար զանոնք պատուել՝ շաքարե-  
ղէններ, կերակուրներ կը բերէին անոնց:  
Ասոնք ալ աս դիւրահաւան մարդիկը  
գտածնուն պէս, ալ բաներնիս յաջող է  
ըսին. և կտոր մը կտաւի կամ արծաթի,  
կամ զոյգ մը նոր ոտքի ամանի համար՝  
միամիտ գեղացիներուն կը խոստանային որ  
իրենց ծածուկ զարմանալի գիտութիւններ  
սորվեցընեն: Աւելի պանդոկներու մէջ  
չատ բան ձեռք ձգեցին. “ Տէ որ մեզի  
ասանկ անանկ բաներ բերէք, կ'ըսէին,  
ձեզի կը սորվեցնենք ծածկած գանձեր գրտ-  
նել, սատանան ստիպել տալ որ ձեզի հա-  
ըրստութեան ճամբայ բանայ. ասկէ 'ի  
զատ մնէք անանկ ծածուկ գիտեր ու

նինք , որ գիտենք թէ ինչ պէտք է ընել  
որ մէկուն ոչ հրացան և ոչ ուրիշ զէնք մը  
չի մնասէ . գողը գողցած բաները շարկած  
երթալու օտոներ՝ անանկ կ'ընենք որ քարի  
պէս անշարժ մնայ , : Աս ըսելով տեղին  
տանտիկինը 'ի հարկէ կ'ուզէր քանի մը  
կախարդութիւններ սորվիլ . օրինակի հա-  
մար , կ'ուզէր գիտնալ՝ թէ ինչ պէտք է  
ընել որ կաթին սերը կողի ըլլայ , երբոր  
ինքը չկարենար շինել . անոնք մէկէն բնա-  
կանէ դուրս բաներ կը զրուցէին որ ընէ :  
Այսպէս իրենց անունը շատ տեղ ելաւ  
զրուցուեցաւ . բայց անով ալ գոհ չեղան ,  
կախարդ ալ երևնալ ուզեցին :

Շատ պառաւներ ասոնց կու գային  
հարցնելու թէ , մենք դեռ որչափ պիտի  
ապրինք . անոնք կեցիր կ'ըսէին , ամէն  
մարդու բաղդը աչուրնուն մրայ գրած է .  
ու աս ըսելով աղէկ մը կը նայէին , մէկ  
երկու արտաուոց շարժմունքներ ընելով ,  
մէկուն կ'ըսէին՝ թէ դուն դեռ այսչափ  
պիտի ապրիս . մէկայլին կ'ըսէին թէ սանկ  
մարդ մը քեզի այսչափ ժառանգութիւն  
պիտի թողու . անանկ մարդ որ կարելի է  
անոնք երազի մէջ ալ տեսած չէին . ումանց



ալ կ'ըսէին թէ՛ գուշակութիւնները յաջող  
չնն վրադ , վասն զի բերած ստակդ խիստ  
քիչ էր : Ասոնք ըսելու ատեն՝ սովորութիւն  
ըրեր էին շատ մը թղթեր խառնելու . շատ  
տղաքներ ասկէ խաբեուլով կու գային ստը  
կով ու աղաչանքով կը խնդրէին որ իրենց  
սորվեցնեն աս արհեստը , որպէս զի իրենց  
ալ բաղդը իմանան : Ասոնք ալ կը ցուցը  
նէին թէ ասանկ խառնեցէք , անանկ մ'ը  
նէք . լսողներն ալ ուրախութեամբ մեծ բանի  
մը հասածի պէս կ'երթային իրենց բաղդը  
փնտռելու :

Ատեն մ'ալ ասանկ երթալէն վերջը տե  
սան որ աս արհեստով ալ չնն կրնար աղէկ  
վաստկիլ , սկսան սլտի գրքեր ու թղթեր  
հանել հաւատքի դէմ ծուռ բաներ գրած .  
տղէտ ժողովուրդն ալ սուրբ գրքի կամ  
ուղղափառ վարդապետութեան պէս անոնց  
սլատուելով կը հաւատար : Աս գրուած  
ներուն մէջ շատ սուտ ու ծուռ բաներ կը  
սորվեցընէին . զոր օրինակ . թէ որ մէկը  
ասանկ բարի գործք մը ընէ՛ առանց խոս  
տովանանքի մեղքերուն թողութիւն կը  
գտնայ . կամ թէ որ մէկը սա ու սա ա  
ղթքները ընէ՛ սատանան ալ չի կրնար ա

նոր փորձութիւններ բերել : Քանի քանի պատանւեր եղան որ աս թղթերէն ժողոված մասունքի պէս վրանին կը սլահէին ու կը նայէին որ չկորսուի : Աս ծուռ գրուած ներուլ գեղերու մեծ վտանգ տուին . վասն զի տգէտ մարդիկ կը կարծէին թէ ուղղափառ եկեղեցին ալ աս գրքերը կ'ընդունի և անոնց կը հաւտայ : Պաքեբաները գիտէին որ բրածնին սուտ է , ճշմարիտ հաւատքը մէկ է , և առանց անոր փրկութիւն չկայ . բայց որովհետեւ իրենք զԱստուած ամենեւին չէին ուզեր յիշել , ուղեցին ուրիշներն ալ գլխէ հանել . ամէն ջանքերնին ան էր որ մէկ կերպով մը ստակ գտնան : Անո՞՞ք քահանաներ , որչափ աշխատեցան ժողովրդեան միտքը սրտկեցընելու՝ թէ ասանկ գրքերը հաւատքի դէմ են , ու ծուռ բաներ կան անոնց մէջը , պէտք չէ հաւտալ :

Ինչ ատենէն Յակոբ ու Ռոմաս աս անգգամութիւնն ալ մէկ դի գրին , բժրշկութեան ձեռք զարկին . շատ տեսակ խտտերու ջրեր հանեցին ամէն հիւանդութեան դեղ պատրաստելու թէ՛ մարդու ըլլայ թէ՛ անասնոց : Այլ տեսակ մը



խիւս ալ շինեցին մեղրով մեղրամոմով ու  
ալիւրով խառնած որ ամէն տեսակ հիւ  
ւանդութեանց դեղ պիտի ըլլար : Վեղին  
մէջ տեղը մեծ սեղան մը կը դնէին , ու  
քովը նստած ամէն հիւանդութեանց վրայ  
վարդապետութիւններ կ'ընէին , իրենց դե  
ղերուն զօրութեանը վրայ պարծելով , և  
մանաւանդ աժան գնով ծախսելուն վրայ ,  
որով ամէն ուզող կրնայ գնել կ'ըսէին :  
“ Կենք այն երկու սարկի տգէտ բժիշկ  
ներէն չենք , կ'ըսէին , որ ամենեւին գութ  
չունին , միայն մարդ խաբել կը նային ,  
դեղերնին սուղ սուղ կը ծախեն : Բնչուան  
աս օրս ով որ մեր դեղերը գործածեց՝  
ըռննոցաւ . դուք ալ փորձեցէք ու տեսնաք  
թէ ըսածնիս իրան է թէ չէ , ” : Աս խօսքը  
ըսելէն վերջը՝ ով չէր հաւատար . հիւանդ  
ները՝ առողջանալու համար . հիւանդութիւն  
չունեցողները զգուշութեան համար գնելու  
կու գային . իսկ անոնք միայն հիւանդնե  
րուն երակը նայելով իրենց խելքովը ա  
նոնց ամէն ցաւերը կը հասկընային : Ասոնց  
անունը լսելով հեռու կողմերէ գեղացի  
մարդիկ կու գային , զանոնք ամէն բժիշկ  
ներէ վեր դնելով . ամէն տեղ միայն ա

անոց վրայ կը խօսուէր : Վեղացիք ալ կ'ըսէին՝ թէ « Մն երկու մարդիկը իրաւյնէ որ շատ վարպետ բժիշկ են , վասն զի իրենք մեզի կ'ըսեն մեր հիւանդութիւնները . դեղերնին ալ անանկ զօրաւոր է որ մէկէն կ'առողջացնուի զմարդ » : Աւ իրաւունք ունէին աս խօսքս ըսելու . վասն զի անանկ դեղեր կու տային որ առողջ մարդըն ալ կը չարչօրկէր . և թէ որ մէկն անոց ըսէր թէ հիւանդը դեղը առնելէն վերջը մեռաւ , անոնք սլատասխան կու տային՝ թէ « Մնոր հիւանդութիւնըներսէն էր , կամ կուրծքէն , և մահը բնական կերպով եկած է , դեղերը անոր չէին կրնար վնաս բերել » : Տեսնալով որ իրենց խարէութեամբ բաներնին առաջ կ'երթայ սկսան ծանրէն քաշել . անանկ որ , աղքատները չէին կրնար ասոնց մօտենալ ու դեղ առնուլ : Աւստի շատ անգամ ողորմելի դեղացիներ կ'երթային աս անզգամ գողերուն ոտքը կ'իյնային . իսկ անոնք որ սրտերնին ալ քար դարձուցեր էին , կը նայէին ան աղքատներու ունեցածը չունեցածն ալ կողոպտել , « թէ որ պէտք եղածին չափը չունիք մեզի տալու , կ'ը

սէին , գոնէ բոլոր ունեցած ստակնիդ  
տուէք . որովհետեւ դուք աղքատ էք ,  
մենք ալ ձեզի աժան դնով կու տանք . որ-  
պէս զի Մատուծոյ սիրոյն համար մենք ալ  
աս բարեգործութեամբ աշխատանքներուս  
փոխարէն անոր օրհնութիւնը առնունք , :  
Եւ ամէնուն հետ ալ խորամանկութեամբ  
կ'երթային . գողերու հետ գող կ'ըլլային ,  
աղէկ մարդկանց հետ վարուելու ատեն  
կեղծաւորութիւնը ձեռք կ'առնուին :

1408  
375.83



ԳԼՈՒԽ Բ .

Անտառին մեջի Քարայրը :

Այս օր մը անտառանց կանուխ անփայել ժողովքէ մը ելլալով Ճամբաս ու Յակոբ ուղեցին երթալ մօտիկ սղտի գեղ մը , վասն զի երկրորդ օրը ան տեղին սաշտ սլան սուրբին տօնն էր , իրենք ալ մեծ յոյս ունէին որ աղէկ անտառը մը ընեն հանկող ջերմեռանդներուն հետ : Բոլոր օրը ճամբայ ընելէն վերջը , յողնած քրտնած մեծ ծառի մը տակ ինկան քիչ մը ուժ առնելու : Ճամբասին քունը շուտ մը տարաւ , Յակոբն ալ շատ ջանաց բայց չկրցաւ քնանալ . վերջապէս խոտին վրայ փռուեցաւ . չորս դին մեծ հանդարտութիւն մը տիրած էր . միտքը անդադար կը բանէր տրտմանի ու վախնալու բաներու վրայօք որ չուզելով միտքը կ'ինկնային . “ Ա՛հ աս ի՛նչ բան է , ըսաւ . երանգ է , չէ . ես չեմ քնանար . թէ որ սատանան է որ ինձի հետ խօսելու կու գայ , որովհետեւ իրեն հետ ա-

դէկ ընկերութիւն ըրի, ինչո՞ւ չխմացրնիր, :  
Աս կ'ըսէր, բայց սիրտը չէր հանդարտէր .  
բանի կ'երթար կը դողդրղար, կարծէր  
թէ ամէն ցուցանքաւոր բաներ աչքին դի-  
մացն են . փուճ տեղը կը ջանար որ զա-  
նոնք կորսընցընէ : Արբոր ասանկ վախու-  
մէջ տարակուտած կեցեր էր, մէյմալ հե-  
ռուէն անկրճին զանգակի ծանր ձայն  
մը եկաւ, որ կ'իմացնէր թէ հոգեվարք մը  
կայ : Տեսաւ մէկ երկրագործ մըն ալ որ  
աս ձայնը լսելուն պէս՝ աշխատանքը թու-  
ղուց ծունկ դրաւ որ մեռնողին հոգւոյն  
համար աղօթք ընէ : Յակորին սիրտը ե-  
լաւ աս տրտում բանէն . “ Իրաւընէ որ  
ըսաւ, Աստուած աս անմեղ մարդկանց ա-  
ղօթքին կը լսէ, որոնք հիմայ՝ անանկ մար-  
դու մը համար աղօթք կ'ընեն, որ վայր-  
կենէ մը վերջը՝ Աստուծոյ արդար դատաս-  
տանին ահաւոր ատեանը պիտի ինջնայ .  
ա՛հ, ամէն մարդ հոն ի՛նչպէս մէկիկ մէկիկ  
համար պիտի տայ ըրածներուն վրայօք :  
Հապա ես . ես որ բոլոր կեանքս մեղքե-  
րով անցուցեր եմ, ա՛հ, ես ի՛նչ պատաս-  
խան պիտի տամ երբոր անոր դիմացը ել-  
լամ՝ զոր միշտ վշտացուցի . ի՛նչ պիտի

ըսեմ ես , երբոր իմ ըրած անկարգութիւն-  
ներս երեսս զարնելու ըլլայ . ան անկար-  
գութիւններս՝ որոնք հիանայ ինձի երազի  
պէս կու գան : Ա՛հ , արդեօք Աստուած  
ի՞նչ վճիռ պիտի տայ ինձի , որ ամէն մար-  
դէ մեղաւոր եմ , :

Օ անգալը դեռ կը զարնէր . իր ձայնին  
հետ տրտմութիւն մը չորս դին կը տարա-  
ծէր . հովիւ մը որ գլուխը կախած ոչ  
խարներուն վրայ կը նայէր , յանկարծ ա-  
չուրները վեր վերցուց , ու սրտին մէկ ազդ-  
մունք մը մէկ նոր շարժմունք մը զգալով՝  
սկսաւ ծանր ձայնով մը ասանկ երգել .

Կեռիք մեռիք , ո՛վ մեղաւոր

Աշխարհք քեզի համար անցաւ .

Ալլիք ելիք , չէս լըսեր կոր

Աստուած մահուան վրձիռ տրւաւ :

Պէտք է մեռնիլ , պէտք է մեռնիլ .

Աս աշխարհքէս պէտք է ելլալ ,

Ան հրաւերին հընազանդիլ ,

Ուզես չուզես ասկէ երթալ :

Ահա թողմած ծաղկի մը պէս



Չորրորդ գրնաց մարդն ալ շուտով .  
Ըն անգութ մահն որ կը տեսնես  
Շունչը խրեց վրան հասնելով :

Ո՛վ մեղաւոր , դագաղ մըտիր .  
Հրապարտութիւնդ ալ մէկդի թող .  
Ըմէն թանկ բան շուտ մը մոխիր  
Պիտի դառնայ հոն ու սե հող :

Չար կամքերնուդ լըսող մարդիկ  
Որ միշտ փափուկ ապրիլ կ'ուզէք ,  
Սահուման ատեն , ա՛հ , ինչ սաստիկ  
Փոփոխութիւն պիտի տեսնէք :

Քրիստոնէից՝ մահը կու գայ ,  
Ընոնք սխառաստ չեն գըտնուիր .  
Ընոր համար մահը կ'ըլլայ  
Ընոնց հոգւոյն վախու վըճիտ :

Յակոբ աս խօսքերն որ լսեց՝ տեսնելով  
Թէ ինչպէս իր վիճակին յարմար է , եր-  
բմն աչուրները երկինք կը վերցընէր , եր-  
բմն ալ գետին կը նայէր : Արթեր որ  
նոյն միջոցին Աստուծոյ դիմաց պիտի ել-  
լայ . ու ահա ակընձին ան ահաւոր ձայնը

կու գար ըսելով՝ « Այրթայք յինէն , ա-  
նիծեալք , ՚ի հօւրն յաւխտենական , որով-  
հետե չբիշեցիք զիա ձեր կենացը մէջ , իմ  
սրատուիրանքներս ոտքի տակ առիք , և կը  
կարծէիք թէ իմ ձեռքէս պիտի կարենայք  
ազատիլ , ո՛վ անխելքներ , գայէք ուրեմն ,  
գայէք դժոխքը՝ որ ըրած գործքերնուդ  
փոխարէնը գտնէք » :

Յակօբ քանի որ մեղքերը կը յիշէր՝ նոր  
նոր անկարգութիւններ աչքին գիմացը  
կու գային . ո՛հ , սիրտը ծախու պէս խռո-  
վեցաւ . սկսաւ անիծել , իր ծնած օրը ու  
իր կեանքը . կ'ուզէր զղջումով Աստուծոյ  
ողորմութեանը ասպալինիլ , բայց կը կար-  
ծէր թէ ալ ատենը անցեր է , ալ ձար չի-  
կայ . իրեն կ'երեւար որ ալ ան ըրած մեղքե-  
րուն գեղ չէր կրնար ըլլալ . ու բոլոր  
կեանքը զանոնք ասպաշխարհիու բաւական  
չէր , ու թէ անկարելի բան է Աստուծոյ  
բարկութիւնը ինչեցնել :

Յաւալի՛ Յակօբ , ծուռ է մտածածդ .  
Աստուած ամենազթած է , միայն մար-  
դուն զղջմանը կը սպասէ . սրատրաստ է  
թողութիւնը , մի՛ կորսրնցնիր սա շնորհ-  
քը : — Ահա Յակօբին աչքը կը բայուի ,



“ Ինչ ըլլայ ըլլայ , կ'ըսէ ինքիւրէն , պէտք է որ ես Մատուծոյ ոտքը ինկնիմ , անոր դիմեմ , ու աղաչեմ որ արցունքիս 'նայելով' ըրած յանցանքներուս թողութիւն տայ , ու մեղքերս քաւէ իր սիրելի որդւոյն Յիսուսի անգին արիւնովը , որ ամէնուն փրկութեանը համար խաչին վրայ թափած է ,, : Աս որ ըսաւ , խղճմտանքը քիչ մը հանդարտեցաւ , և ինքն ալ առաջինէն աւելի հանգստութիւն գտաւ :

Աս բոլոր ատենիս մէջ՝ Թոմաս խորունկ քունով կը քնանար , բայց դէմքին վրայ չէր վայլէր այն հանգստութիւնը զոր մաքուր խղճմտանք ունեցող մարդ մը կ'ունենայ : Միշտ տակն ու վրայ եղած՝ կարծես թէ նոր նոր մեղքեր կ'երագէր որ արթըննայ նէ ընէ : Յակոբ ատեն ատեն խեղճ կերպով մը անոր վրայ կը նայէր , ու “ Ահա , կ'ըսէր , մէկ քնացող մեղաւորի մը դէմք , ափսոս . թէ որ յանկարծ մահը աս վայրկենիս մէջ վրան հասնելու ըլլայ , մեղքերու մէջ թաղուած պիտի գտնէ զանիկայ . բայց ես ալ որ միշտ իրեն ընկերը եղեր եմ , արդեօք ես ալ անոր համար սպատասխան չլտամ մի պիտի . . . . Հիմա ի՞նչ ընեմ .

արթընցնեմ զան ալ, ու իմ զղջումիս ընկեր ընեմ . . . : Իրաւյընէ, սրարտքս է որ լալով ու աղաչանքով յորդորեմ զինքը որ դառնայ չար ճամբէն և ըրած մեղքերը զղջայ . . . բայց ո՞վ գիտէ, արդեօք պիտի կրնամ զինքը համոզել . . . արդեօք իրեն համար ալ Աստուծոյ գթութեանը չափը լեցուեր է : Աստուծոյ կը յանձնեմ ես զինքը, ու կը թողում կ'երթամ. չըլլայ թէ մեղաւորը իր մեղքերէն նոր դարձած ըլլալով ուրիշի օգնելու տեղը՝ ինքն ալ նորէն փոսը իյնայ : Պէտք է որ փախչիմ ես անկէջ որ, չըլլայ թէ զիս ասպաշխարութեան ճամբէն ետ դարձնէ, » : Աս ըսաւ ու անդամ մ'ալ թմամասին վրայ նայեցաւ, տեսաւ որ դեռ չարթըննար. « Աստուած քեզի ալ տայ, ըսաւ, ո՞վ ընկեր, ինձի տուած շնորհքը, իր աստուածային լուսովը դքեզ ալ լուսաւորէ, » : Աւ լալով դողալով հեռացաւ անկէջ, վախնալով որ չըլլայ թէ թմամաս արթըննայ իրեն արդեւք ըլլայ. ամէն բան Աստուծոյ թողուց, սկսաւ փախչիլ :

Շատ ճամբայ ընելէն ետե՛ հասաւ մէկ մեծ անտառ մը, ներս մտաւ, ու երկարատեմ բարբարական ասդիս անդին պը-

տըտելով, անասպատ տեղ մը հասաւ,  
ուր որ կը կարծէր թէ ոչ աշխարհք կայ  
և ոչ անոր մոլորութիւնները. հոն ըն-  
կաւ Աստուծոյ դիմացը խոնարհութեամբ  
'ի դետին. տղայութենէն ինչուան այն  
ատեն Յակոբ աղօթք ըրած չունէր. ախ-  
տերու մէջ թաղուած ըլլալով իր ստեղ-  
ծողը մոռցեր էր: Հիմայ դետինն ընկած,  
կ'ըսէր Աստուծոյ. « Աս արժանի չեմ  
ասկէ վերջը աչքներս քեզի դարձնել,  
ն՛վ Աստուած արդար դատուոր, բայց աս  
արցունքներուս ու զղջմանս նայէ. անհ,  
Տէր իմ, քու ոտքդ ինկած կ'աղաչեմ  
ողորմէ ինձի, մի յիշեր ըրած մեղքերս,  
ասկէ վերջը կ'առաջադրեմ որ մէկ մալ  
չընեմ: Ահ, ո՛ւր էր թէ աս զղջմանս  
ցար՝ ըրած յանցանքներէս մեծ ըլլար:  
Արձանչեամ որ մեղքերս ծովու աւազին  
հատերէն ալ շատ են, ու գիտեմ որ վրաս  
ժանրացիք են բոլոր աշխարհքիս ժանրու-  
թեանը պէս. գիտեմ, Աստուած իմ, որ  
քեզի դէմ մեղանչեցի, բայց դուն անհուն  
գթած ես, մեղաւորէն չես քաշուիր: Ախ,  
թէ որ արժանի կը սեպեա ինձի հայր ըսուե-  
լու՝ դարձու քուկին գթած աչուրներդ,

նայէ՛ ինձի պէս անարժան որդւոյդ վրայ , որ ասկէ վերջը կ'ուզեմ արցունքովս լալ իմ մեղքերս , ու հոգիս ճերմակցընել , :

Քիչ մը ատեն ասանկ երեսի վրայ ինկած կենալով , իմացաւ որ Աստուած աղօթքին կը լսէր : Ա երջապէս ելաւ սկսաւ երթալ որ բնակելու յարմար տեղ մը գտանէ . բոլոր անտառը պըտըտելէն վերջը , քարայր մը գտաւ , բայց հոն երթալու ճամբան շատ դժար էր . պէտք եղաւ որ սալառածներու վրայէն ճանկըրտելով անցնի , փոսերու վրայէն ցատքէ , ու մորմնինքերու և փուշերու մէջէն ելալով ինջնալով ճամբայ բանայ : Ինչ որ է նէ՛ շատ դժուարութեամբ հասաւ քարայրը , տեսաւ որ շատ սղտիկ էր , անանկ որ մէկ մարդ մը հազիւ կրնար մէջը կենալ . դրոսէն ալ մտնելու շատ աշխատանք պէտք էր , վասն զի միայն վերի կողմէն ծակ մը կար . բայց Յակոբ աս տեղս իրեն շատ յարմար սեպեց բնակելու . որովհետեւ ինքը բոլորովին աշխարհքիս ամեն հանդրատութենէն երես դարձուցեր էր : Այլ բոր այրին մէջ իջաւ , նորէն բնկաւ Աստուծոյ առջին ու սկսաւ շնորհակալ ըլլալ

որ զինքը հոս տեղը բերաւ , և բոլոր սրբ  
լալով աղօթք կ'ընէր , անօթութուներ մոռ  
նալով . “ Պէտք է որ , կ'ըսէր ինքիրեն ,  
աղօթքով և սպարով Աստուծոյ ողորմու  
թեանը արժանի ըլլամ , : Իսկ երբոր գի  
շերը հասաւ չորս դին խորունկ լուծիւն  
մը ըլլալով՝ Յակօբ սկսաւ ինքնիրեն մտա  
ծել . “ Ի՞նչպէս ինչուան հիմայ ես խեղճ  
ու ողորմելի էի , ամենևին անմեղ զուար  
ճութիւն մը շունեցայ իմ կենացս մէջ .  
միշտ չար կամքիս հետեւելով մէյմը աս  
բանս կ'ուզէի , մէյմը ան բանը . մէկ վայր  
կեան մ'ալ հանգիստ անցուցած չեմ , ո  
րովհետեւ միշտ Աստուծոյ հետ թշնամու  
թիւն ունէի . և ասանկ կուրի սէս կ'եր  
թայի : Փանք Աստուծոյ զթութեանը որ  
զիս լուսաւորեց : Բայց կարծեմ՝ թոմասը  
երեկ ես ինչ որ էի՝ ինքը դեռ անանկ է ,  
և դեռ վարքը չէ փոխած . անի , արգեօք ,  
ե՞րբ անիկայ ալ իր ճամբէն ետ պիտի դառ  
նայ : Ո՛ւր էր թէ կարելի ըլլար , որ վայր  
կեան մը զինքը տեսնէի և ըսէի իրեն , թէ  
հիմայ ի՞նչպէս իմ խղճմտանքս հանգարտ  
է , և ի՞նչպէս երջանիկ եմ երբ դտայ իմ  
ճշմարիտ Աստուածս , որ միայն կրնայ հոյ  
ւոյ խաղաղութիւն տալ , :

Յակոբ ասանկ թոմասին համար խըն  
 դրուածք ընելու ատենը քունը տարաւ ,  
 գլուխը քարի մը վրայ դրած : Աջրազ մը  
 տեսաւ՝ որ երկու գայլ մէկտեղ մը կեցեր  
 էին . քիչ ատենէն մէյմ՝ ալ նայեցաւ , ա-  
 նոնցմէ մէկը գառնուկ եղած գտաւ . անցնող  
 դարձող զարմացած , աս ի՞նչ բան է , կ'ը-  
 սէին . քիչ մը առաջ ասկէ անցանք՝ երկու  
 գայլ տեսանք , հիմայ մէկը ոչխար եղեր է .  
 թէ որ իրաւցընէ անիկայ ոչխար դարձեր  
 է՝ մէկալ գայլը ինչո՞ւ չէ եղեր : Արդիկ  
 աս բանիս վրայ վիճելու ատենը՝ հովիւը  
 վրայ հասաւ , ու գառնուկը գիրկը առնե-  
 լով սկսաւ շոյել . ոչխարն ալ իր երախ-  
 տագիտութիւնը ցուցընելու համար անոր  
 քսուրոտելով կը քծնէր . անցւորները երբոր  
 հովիւը տեսան , գիտես , ըսին , աս ոչխա-  
 րը քիչ մը առաջ գայլ էր , երեկ ասկէ ան-  
 ցնելու ատեն հոս տեղս երկու խոշոր գայլ  
 տեսանք , որ շատ ատենէ՛ ՚ի վեր ոչխար-  
 ներուն մեծ ջարդ կը հասցընէին : — Ի՞նչ  
 պէս կրնայ ըլլալ որ չգիտնամ ըսաւ հո-  
 վիւր , ես ամէն օր ոչխարներս կը համ-  
 ընմ , աս մօտերս գայլ ըլլայ նէ ի՞նչպէս  
 չեմ խմանար . բայց դուք ինչո՞ւ կը զարմա-



նաք թէ գայլը ոչխար կրնայ մի ըլլալ .  
չէք գիտեր որ Աստուած ամէն բան կր-  
նայ ընել . անիկայ որ ոչնչէն աս աշ-  
խարհքս ստեղծեց , կրնայ մէջի բաներն  
ալ փոխել , և ոչխար դարձնել ամէնէն  
կատղած գազանն ալ : Աս խօսքս ըսողները  
հարցուցին թէ , ուրեմն ինչո՞ւ մէկալ գայլն  
ալ ոչխար չեղաւ . ան ալ պատասխան տը-  
ւաւ . “ Ո՛վ ողորմելիներ , դուք ձեր ըրած  
գործքերն ալ չէք գիտեր , կ'ուզէք Աս-  
տուծոյ անբաւ իմաստութեանը խնրք հաս-  
ցնել . դուք նայեցէք որ ամէն կերպով  
ջանաք ձեր հողին փրկելու , ուրիշ բան մի  
մտածէք ” :

Յակոբ քունէն արթնցաւ , բայց երա-  
զը դեռ աչքին առջևն էր . մէկէն երեսին  
միայ ինկաւ , և սկսաւ Աստուծոյ աղաչել  
որ մէկալ գայլն ալ ոչխար դարձնէ : Ա-  
ռաւօտուան մօտ՝ Յակոբ անօթութիւն իմա-  
ցաւ , ուտելու բան կը փնտռէր , որովհե-  
տև որ մը և գիշեր մըն էր որ բերանը բան  
չէր դրած : Ճամբայ ելլալէն առաջ եր-  
կայն աղօթք մը ըրաւ , սկսած օրը Աստու-  
ծոյ նուիրեց և աղաչեց որ Աստուած տայ  
իրեն հարկաւոր եղած բաները : Աղօթքէն

վերջը դուրս ելաւ , սկտաւ ասդիս անդին  
ուտելիք փնտոել . քիչ մը ճամբայ ընելէն  
վերջը հեռուէն տուն մը տեսաւ , անոր մօտ  
տարիքը առած մարդ մ'ալ , որ գետին կը  
բանէր . խմայաւ որ տանտէրն է , գնաց  
անոր քով ու քաղաքավարութեամբ բարեկեց  
ղնեքը : Գեղացին գլուխը վերցուց նայե-  
ցաւ որ մէկ գեղնած երեսով երիտասարդ  
մը քովը կեցեր է , գէմքը վատուծցած , ա-  
չուրները արցունքով լեցուած , կարծեց թէ  
գերեզմանէ փախած մեռել մը նէ . վերջա-  
պէս , “ Բարի եկար , բարեկամ , ըսաւ ,  
ի՞նչ կ'ուզես , ” :

Մտուծոյ սիրոյն համար , հրամանքիդ  
բարեսրտութենէն քիչ մը հաց կ'ուզեմ :  
— Հիմա հոս քեզի տալու բան չունիմ ,  
բայց սա տունը կը տեսնանս , անիկայ խմ  
է , գնա՛ հոն , ընկերս քեզի կերակուր  
կու տայ : Աս ալ քիչ ատենէն աշխատան-  
քըս կը ըմնցնեմ կու դամ . Յակօր հոն  
գնաց գտաւ գեղացւոյն կնիկը : “ Բարի  
ըսա , մարիկ , ըսաւ : — Բարի եկար ,  
տղաս ըսաւ կինն ալ . կարծեմ երկան  
ճամբայ ընելով յագներ ես , և անշուշտ  
անօթի ես , սփսոս որ քեզի համար հխմայ



աղէկ բան մը չունիմ հանելու , բայց  
եկժէ . քիչ մը խողի ասլուխտ , քիչ մ'ալ  
կարագ ու սլանիր : — Են կենաս ըսաւ  
Յակօբ , ինծի պէս ողորմելի մարդուն ա-  
տոնք ալ շատ են . կտոր մը հաց քիչ մ'ալ  
ջուր ինծի բաւական է ,, : Բայց տեսա-  
լով որ աս կիներ բարի սրտով կ'աշխա-  
տի իրեն համար , ըսաւ . կիներ ալ աս  
տեսնալով . “ Դնչու ասանկ տրտում ես ,  
տղաս , ըսաւ . ինչ ունիս , թշուառութիւն  
մը բան մը հասեր է գլխուդ . զուրցէ , մի  
վախեր . իմ ընկերս ալ որ հիմայ տունը  
չէ , գլխած մարդ մը նէ , երբոր դայ նէ .  
սլատմէ մեզի գլխուդ եկածը , ու կարելի է  
քեզի ճար մը ընենք . հիմակու հիմայ նատ-  
ու կեր : — Բու ընկերդ ես , տեսայ , մա-  
րիկ , և իրեն հետն ալ խօսեցայ . երանի  
ձեզի որ ձեր հանգստութիւնը գտեր էք  
մէկ տեղ : — Իրաւցրնէ որ անանկ է , 25  
տարի է առանց մէկ դժուարութեան մը  
մէկ տեղ ապրեր ենք . Աստուած մեզի հինգ  
զաւակ տուաւ , որոնց առջիններ 18 տար-  
ուան է , էն պզտիկն ալ 12 : Հինգն ալ  
Աստուծոյ վախուն մէջ մեծցուցինք , և  
աշխատասէր ըրինք , ասանկով երկու մե-

ծերը հիմայ մեզի կրնան օգնել, մնացած  
երկքը դեռ կարդալու կ'երթան : Մնողայ  
առջի պարտքը ան է որ՝ իրենց զակրնները  
քրիստոնէի պէս մեծցրնեն : Մենք ալ  
տանը մէջ կը ջանանք որ անոնց բարի օրի-  
նակ տանք, ամէն օր անոնց համար ա-  
ղօթք կ'ընենք, ու կը խնդրենք Աստուծմէ  
որ անոնք ալ զմեզ ուրախացրնեն : Ասկէ  
'ի զատ Աստուծոյ ողորմութեամբը ին-  
չուան աս օրս ողջ առ ողջ ենք, բանի,  
մ'ալ կարօտութիւն չունինք ,, :

Աինը Յակոբին կերակուր տալու ատե-  
նը՝ էրիկը վրայ հասաւ, երկուքն ալ շատ  
կը հրամայրնէին որ ուտէ, բայց անիկայ  
միայն հաց ու ջրով կշտացաւ : “ Դուք  
չէք գիտեր, բարեկամներ, ըսաւ Յակոբ,  
թէ ես ինչ մարդ եմ. չէք գիտեր ինչ  
ողորմելի մարդու հետ կը խօսիք, որ  
տղայութենէն 'ի վեր Աստուծոյ կամբին  
գէմ ըրեր է : Իմ ամէնէն աղէկ տարի-  
ներս պարասլ զուարճութեամբ ու խմելով  
անցուցեր եմ, առաքինութիւնը ու պատիւը  
ոտքի տակ աւնելով, ասկէ զատ իմ մեծ  
ջանքս ուրիշները գլխէ հանելն էր, գողու-  
թիւն կ'ընէի՝ չէի ամբջնար սուտ կը զրու-

յէի, հոգս չէր ըլլար, Աստուծով ամենակին չէի վախեր, բայց մարդկանցով քիչ մը կը վախէի: Ենծի նման մէկ ընկեր մ'ալ ունէի, ուսկից նոր բաժնուեցայ, չեմ գիտեր ան ինչ եղաւ. և ո՞վ գիտէ թէ աս ատենս ի՞նչ գործքի ետեւէ է,,:

Աս լսելէն վերջը կիներ դարձաւ ըսաւ. «Ուրեմն դուն պզտիկուցով ծնողքդ կորսրնցուցեր ես, որ ասանկ ինքիւր գլխուդ բաներ կ'ընէիր: — Աս տունէն ելայ նէ հայրս ալ մայրս ալ ողջ էին, հիմայ Աստուած գիտէ աս աշխարհս են թէ չէ. չուզեցի տունը կենալ, որպէս զի անոնց ձեռքէն խալըսիմ. իրենց սիրտը շատ անգամ կոտորեր էի, տուած խրատնին չի պահելով: Ափսոս ինծի. ո՞ւր էր թէ մտիկ ըրած ըլլայի անոնց. հիմայ այսչափ թըշուառ չէի ըլլար, և Աստուծոյ դիմացը այսչափ յանցաւոր չէի մնար: — Հիմայ ի՞նչ կրնես, ըսաւ ծերը: — Արկու օր է որ խելքս գլուխս եկաւ. Աստուած միտքս լուսաւորեց, ու ան ինկած փոսէս զիս դուրս հանեց, չէ նէ անշուշտ հոգիս պիտի կորսուէր. փառք կու տամ Աստուծոյ որ զիս ազատեց: Ինքը իր սուրբ ա-

և նտարանին մէջը , ըսաւ թէ , ով որ կ'ուզէ իմ' ետևէս դալ ինքը զինքը ուրանայ , անոր համար ես ալ միտքս դրի որ աշխարհէ փախչիմ , իմ' կամքս ալ թողում' ու մեղքերս լամ առանձնութեան մէջ . մտիկ անտառիս մէջ մէկ պզտորտիկ քարայր մը դտայ , որ ինձի յարմար սեպեցի , թէպէտ դռնէն մտնելը շատ դժար է , ինչու որ այրին վրայէն պէտք է վար ինջնել , :

Ան ատենը ծերը անոր սանդուխ մը տուաւ , բայց Յակոբ չառաւ : “ Աստուած զիս հոն տեղը առաջնորդեց ու տարաւ , ըսաւ , թէ որ կ'ուզէ որ ես աւելի հանդիստ ըլլամ ինքը թող հոգայ , , :

Յակոբ քիչ մը բան ուտելէն վերջը իրեն բարերարներուն շատ շնորհակալ եղաւ , և երթալու հրամանն ուզեց իմացընելով որ չիկրնար հոն շատ ուշանալ : “ Միայն ձեզմէ բան մ'ալ կը խնդրեմ , ըսաւ , ինձի շնորհք ըրէք՝ որ երբեմն երբեմն դամ' հացիկ մը ուզեմ' ձեզմէ . ես ալ փոխարէն ձեզի ուռիի ճիւղերէ կողովներ կը հիւսեմ' կը բերեմ , դուք անոնք ծախեցէք , ըստակն ալ բարով վայէք , , :

Անոնք ալ շատ աղէկ ըսին , աղաչելով

որ ստէս ստէս դայ զիրենք տեսնելու :  
Տանտէրը ուզեց որ հետը երթայ անոր  
քարայրը , ու աղաչելով հաւանեցուց որ  
առնու սանդուխ մը , ջրի աման մը , և  
կողով հիւսելու հարկաւոր եղած գործիք-  
ները : Տունէն ելլալու ատեն Յակոբ տա-  
նը խաթունին աղաչեց որ զինքը չի մոռ-  
նայ աղօթքին մէջ յիշելու . ան ալ յանձն  
առնելով խնդրեց սր ինքն ալ իրեն և  
իր զակրներուն համար աղօթք ընէ :  
Արբոր քարայրը հասան , ձերը աս անա-  
պատը տեսնելով սիրտը շարժեցաւ , Յա-  
կոբին օգնեց բաները վար ինջեցնելու , և  
սանդուխն ալ գրաւ՝ որպէս զի կարենայ  
դիւրաւ ելել ինջնել . վերջը երթալու ա-  
տեն խոստացաւ որ նորէն դառնայ ու քիչ  
մը յարգ բերէ որուն վրայ սլառկի Յակոբ  
և մէկ կտաւէ ծածկոց մը . Յակոբ չէր  
ուզեր զանոնք առնուլ , բայց տանտէրը  
“ Գիտցած ըլլաս , ըսաւ , թէ որ բայ  
դեանի վրայ սլառկելու ըլլաս առողջու-  
թեանդ մեծ զէն կը հասցնես . Ատուած  
ապաշխարողէն չուզէր որ կեանքը կար-  
ճեցնէ ” : Վերջը անտառին մէջ մէկ  
կտոր մը տեղ ցրցուց ու ըսաւ . “ Աս տեղն

ալ իմն է, քեզի ինչ որ սկտք ըլլայ, զնա  
անկէց առ : Աւրիշ բանի համար մի մտա-  
ծեր . մենք քու ամէն հարկաւոր բաներդ  
կը հողանք ,, :



## ԳԼՈՒԽ Գ.

Առանձնուրիշն ու գղջուսն .

ԵՐԲՈՐ Յակոբ մինակ մնաց, ինքն իրեն ըսաւ . “ Պէտք է որ ամէն բանէն առաջ ես ընդ հանրական խոստովանանքի մը պատրաստութիւն տեսնամ, թէպէտ ինձի համար աս բանս շատ դժուար պիտի ըլլայ, որովհետեւ շատոնցվոնէ՛ ՚ի վեր է որ սուրբ խորհուրդներուն չեմ մտակցած . բայց ասկէ ալ հարկաւոր բան չիկայ ինձի . պէտք է դժուարութիւնները բանի տեղ չի դնել : Իբրաւ մկրտութեամբ սկզբնական մեղքերնիս կը սրբուի, բայց ներգործականները չէ . անոր համար Քրիստոս ապաշխարութեան խորհուրդը հաստատեց, առաքեալներուն ըսելով թէ, ձեզի իշխանութիւն կուտամ ուրիշները մեղքերնէն ազատելու ալ, կապելու ալ : Արեմն ես ալ սկսիմ հիմայ Աստուծոյ հրամանը կատարել ” : Աս ըսելով ինկաւ գետինը ու



կ'աղաչէր սուրբ հոգւոյն որ միտքը լուսաւորէ . Աստուած ալ աղօթքին լսեց , միտքը բացուեցաւ , տեսաւ իր մեղքերուն ինչպէս դէշ բան ըլլալը , սկսաւ ջերմեռանդութեամբ ներումն ուղիւ : Ինչպէս որ արևուն ճառագայթները լեռներուն վրայի ձիւները կը հալեցնեն , այնպէս՝ ու ալ շուտ Աստուծոյ շնորհքը մարդկանց մեղքը կը ջնջէ . — Ա՛հ , կանչեց Յակոբ կոտրած սրտով , ինչպէս կոյր է եղիւր մեղաւորը , շատ անգամ իր աչքին բան չերևցածները , Աստուծոյ դիմացը մեծ մեծ մեղքեր են . շատ հեղ առաքինութեան ճամբան առջին բացած ըլլալով , ինքը իր չար յօժարութիւններուն ետևէն կերթայ . իրեն կիրքերուն հետևելու համար փրկութեան ճամբէն կը փախչի , ու զԱստուած կը բարկացնէ : Ավ ողորմելի մարդ , չես մտածեր թէ ինչու համար ստեղծուեր ես :

Յակոբ քանի մը օր ասանկ խղճմբտանքը քննելէն ու պատրաստութիւն տեսնալէն վերջը մտածեց որ երթայ իր բարեկամին աղաչէ՝ որ իրեն աղէկ խոստովանահայր մը գտնայ : Աս մտածելու ատենը բարեկամն ալ վրայ հասաւ . “ Աղէկ ատեն



Հասար , ըսաւ Յակոբ , ես հիմայ կը պատրաստուէի որ դամ հրամանքէդ բան մը խնդրեմ : — Բսէ նայինք , ի՞նչ կուզես : — Աւրիշ բան չէ , ըսաւ Յակոբ , մէկ պարտք մը պիտի կատարեմ որ շատ տարի է չեմ ըրած . կը խնդրեմ որ ինձի մէկ աղէկ քահանայ մը գտնաս . բայց ա՛նանկ շատ հեզ ու քաղաքաւար մարդ չեմ ուզեր , հասլա խելացի ու խիտտ , որ ինձի յարմար փրկութեան ճամբայ բանայ : — Մեր ժողովրդապետէն աղէկը չկայ , ըսաւ բարեկամը , նման ուզածդ է . սրբակեաց մարդ մը նէ , առաքինի ու իմաստուն , և ամենաբարերար . ասով ամմէն տեղ իր ա՛նունը ելած է : — Ատոնք աղէկ է , բայց ալ ուրիշ ի՞նչ բան գիտես ատ քահանային վրայ , ըսէ որ իմանամ : — Արովհետեւ կը հարցնես , ըսաւ բարեկամը , մտիկ ըրէ . նախ և առաջ ինչպէս որ քահանայի կը վայլէ այս ժողովրդապետը մէկ հաստը սեղգետտ մը կը հագնի , որուն կապայ կ'ըսեն . անանկ որ հեռուէն տեսնալով ամէնքն ալ կը ճանչնան , և ամէնքն ալ իրեն բարեւ կու տան . կիրակի և տօն օրերը միշտ աս կրկայն զգեստը կը հագնի . կօշ-

կի տեղ ալ հողաթափ կը գործածէ . բոլոր  
հագուստն ալ սարդ է բայց մաքուր : Ինքը  
թէսկէտ ուրիշ օգնական կամ աթոռակալ  
չունի , բայց ամէն կիրակի մեզի քարոզ  
կը խօսի : Միտքս կու գայ որ օր մը քա-  
րոզին մէջ ըսաւ , թէ ատուածային սրաշ-  
տօնները երբոր հողէոր խօսք չըլլայ հետը ,  
առանց հայի սեղան մը կը նսնանին : Աս  
պատուական քահանան չեկած , անանկ  
ստէպ խոստովանանք ըլլողներ , սրբու-  
թիւն առնողներ չկային , վասն զի ասկէ  
առջինը միշտ հիւանդոտ ըլլալով , ասոր  
ըրած աղէկ գործքերը չէր կրնար ընել :  
Բայց հիմա ամէն բան փոխուեցաւ . աս  
քահանան կ'ուզէ որ գոնէ ամիսը մէյնը  
խոստովանանք ըլլանք և սրբութիւն առ-  
նուիք . անով ինքն ալ կուրախանայ : Շատ  
հեղ մեզի կը պատմէ սուրբ եպիսկոպոսնե-  
րու ու քահանաներու գործքերը , որոնք  
միշտ կը յորդորէին իրենց ժողովուրդը՝ որ  
որչափ կարելի է շուտ շուտ խոստովանանք  
ըլլան , մեղքերնին քաւեն . վասն զի ասով  
հողին կը զօրանայ : Շխտակը կը զրու-  
ցեմ , ես քանի անգամ որ խոստովանանք  
կ'ըլլամ . հողիս կը մխիթարուի , և բարի

գործքեր ընելու առելի փափաք կու գայ սրտիս : Ասոր համար է որ հիմայ ամէնքն ալ խոստովանանքի կը վազին . առաւօտը ժամը չորսին մեր քահանան խոստովանարանը կը նստի , երբեմն ալ կանուխ . և ուր ատեն որ մէկը ուզէ խոստովանանք ըլլալ՝ անիկայ պատրաստ է . ճշմարիտ , քանի որ աս ժողովոյդապետը եկաւ . ժողովուրդը շատ փոխուեցաւ աղեկի , վասն զի գեղին մէջ բան չըլլար՝ որ անիկայ չի քննէ չի մանայ . մարդ կը զարմանայ թէ ուսկից ըսեր է . վասն զի տունէն ալ քիչ անգամ դուրս կ'ելայ . երբեմն ելայ ալ նէ դաշտը երթալու , հետը աղօթքի գիրք մը կ'առնու : Քեղի բան մըն ալ պատմեմ որ նոր պատահեցաւ . աս մտի գեղերուս մէջ երկու բարբարական երխտասարդներ կային , որ հաւատքի դէմ կը խօսէին , ժողովուրդը ժամէն դուրս ելար չելար ասոնք ամէն տեսակ ծուռ ու մուռ մոլորական գրքեր անոնց կը ծախէին . ասկէ 'ի վատ հետերնին գեղեր ալ ունէին որ սուղ սուղ կը ծախէին : Շատ գեղացիք սկսան աս երկու շատախօսները գովել , մեծ մարդու տեղ դնելով զանոնք . բայց ես ոչ տեսայ

զանոնք ոչ ալ տեսնալ ուզեցի, մէկէն ա-  
նոնց խօսքերէն խմացայ որ գող ու խաբե-  
բայ մարդիկ են. զաւիրներուս ալ ապրա-  
պրեցի որ չըլլայ թէ մօտիկնան անոնց :  
Ասոնք գացին չգացին, նայիս մեր քա-  
հանան ամէն բան խմացեր էր. հրաման  
հանեց որ բոլոր անոնց տուած գիրքերը  
բերեն. և ամէնն ալ այրեց. երկրորդ  
կիրակին աղուոր քարող մ'ալ տրւաւ ան  
գիրահաւատ մարդկանց գէմ' որ շուտ  
մը ան խաբերաներուն հաւտացեր էին :  
Անոնց դեղերն ալ մէկգի թողէք ըսաւ,  
վասն զի թոյն են, ուրիշ բան չեն. և ի-  
րաւունք ունէր ասանկ ըսելու, վասն զի  
շատերը անոնց դեղերը առնելով սատտիկ  
հիւանդացան : Ահա ասանկ է բարեկամ,  
հիմայ ես կ'երթամ քահանային խմաց տա-  
լու. գիտեմ որ երբոր տեսնես զինքը՝ շատ  
սլիտի հաւնիս ,, : Արկրորդ օրը Յակոբ  
գնաց քահանային, որ շատ սիրով ընդու-  
նեցաւ զանիկայ. ան ալ սրտովեց, թէ  
ինչ բանի համար եկեր է. քահանայն՝  
շատ աղէկ, ըսաւ. սրտորաստուեր ես  
խոստովանելու : Հրամաներ ես, հայր սուրբ  
ըսաւ Յակոբ : — Ան ատեն քահանայն

զՅակոբը իր սենեակը տարաւ , ու խաչելութեան մը գիմապը սկսաւ խոստովանցընել . “ Արնայ ըլլալ , ըսաւ Յակոբ որ , մեղքերուս մէկ մասը մոռցած ըլլամ , որոյ՛հետեւ բոլոր կեանքս մեղքով անցուցեր եմ ” : Քաճանայն՝ “ Ախտեմ , ըսաւ , որ դուն բոլոր ըրածներդ չես կրնար միտքդ շուտով բերել . անոր համար ես քեզի մէկ քանի օր ալ միջոց կուտամ , որդեակ , որ աղէկ մը մտածես : Պատարագիս մէջ կը յիշեմ զքեզ Մատուծոյ գիմապը՝ որ միտքդ աղէկ մը բանայ : Աոյն օրը քաճանայն ստիպեց զՅակոբ որ կենայ հետը կերակուր ուտելու : Յակոբ չէ չի կրցաւ ըսել աս սրբակեաց քաճանային , տեսնալով որ ինքը ինչ սիրով իր խնդիրը ընդունեցաւ : Բայց ուտելու ատենը ուրիշ քանի վրայ չէր խօսէր Յակոբ , բայց միայն իրեն զղջումի գալուն , Մատուծոյ ըրած շնորհքին վրայ , և իր աշխարհքէ հեռացած կեանք անցընելուն վրայ : Ա երջը հարցուց , թէ՛ առանձնութեանս ատենը ինչպէ՛ս անցընեմ ժամանակս , ու արդեօք Մատուած կ'ուզէ՞ որ ասանկ քաշուած կենամ : Քաճանայն ալ պատասխան տուաւ .

“ Այս ալ քու խորհուրդիդ հաւնած եմ ,  
դէշ չես մտածեր . շատ ճգնաւորներ մի-  
նակուկ կենալով մէյակ սուրբ եղան , մա-  
նաւանդ դուն թէ որ աշխարհ դառնալու  
ըլլաս առաջուան ըրած գործքերդ դեռ  
բոլորովին քեզմէ հեռացած չըլլալով կրը-  
նայ ըլլալ որ նորէն զքեզ ետ դարձնեն .  
ու վայ դիտուդ՝ թէ որ մէյակ ալ ինկնալու  
ըլլաս , շատ դժուարաւ կրնաս ելլել : Աս-  
տուած մեծ շնորհք ըրաւ՝ որ խելքդ  
գլուխդ բերաւ՝ բայց ո՞վ կրնայ վստահիլ ,  
որ եթէ նորէն իյնալու ըլլաս նորէն ձեռ-  
քէդ բռնէ ու վերցընէ : Աստուած մե-  
ղաւորէն չափէն վեր բան չուզեր . բայց  
դուն սէտք չէ որ վրադ վստահ ըլլաս ,  
գիտցիր որ մարմինը տկար է , սատանան  
ալ չի դադրիր փորձութիւն բերելէն . ասոր  
դէմ աղօթք , պահք ու աշխատանք հար-  
կաւոր են : Այկեղեցւոյ դրած սրաքերը ու  
ծոմերը պահէ ու հաւատայ որ , ով որ  
եկեղեցւոյ կը հնազանդի՝ Աստուծոյ սի-  
րելի է . վասն զի Յիսուս աւետարանին  
մէջ ըսեր է թէ՛ ով որ իմ եկեղեցւոյս մտիկ  
կ'ընէ , ինձի մտիկ ըրած կը սեպուի : Հո-  
գին փրկելու համար հարկ չկայ որ մարդ



աշխարհքէս փախչի, ո՞ր և իցէ արհեստաւոր իրեն գործքերը աղէկ ընէ կրնայ հոգին փրկել, հարուստն ալ աղքատն րուն ողորմութիւն ընելով, նեղութիւններու համբերելով, կրնայ իր հոգին փրկել: Աւստի որդեակ, մի կարծեր թէ միայն աշխարհքէ փախչելով հոգւոյ փրկութեան ճամբան կը գտնուի, բաւական է որ մէկը իր գործքերը Աստուծոյ սիրոյն և փառացը համար ընէ, ու եկեղեցւոյ պատուիրանքները պահէ. դուն դեռ կտրիճ մըն ես, շատ աղէկ ըրիր որ բանի ձեռք չի զարկած խոստովանահօրդ խրատ հարցուցիր: Վիտցիր որ ամէն բան շափով պիտի ըլլայ, չափէն աւելի եղածը՝ շատ չի դիմանար: Ակեղեցին մեզի շրտաւ թէ, Աստուծոյ սիրոյն համար անօթութենէ մեռիք, հապա երբեմն երբեմն սլաքեր դրաւ որ զմեզ մահացրնենք, աշխարհքիս ամէն հեշտութիւններուն չիվազենք. շատերը կան որ աս հրամանները դժար բան մը կը կարծեն, բայց որչափ որ դժար ըլլայ բանը՝ Աստուած ալ անչափ մեծ վարձք պիտի տայ: Ամէն բանէն աւելի նայէ որ ստէպ ստէպ խոստովանանք ըլլաս, սրբութիւն առնուս,



գիտնաս որ միայն աստնցմով կրնաս ա-  
ռաջադրութեանդ միայ հաստատ կենալ :  
Այսչափս հերիք է այսօր , բաւական է որ  
չի մոռնաս ըսածներս . մէկ քանի օրէն  
եկուր որ , հաւատքի բաներու միայ խօ-  
սինք ,, : Յակօր իր քարայրը դառնալու  
ատենը երկրագործին տունը հանդիպելով՝  
չնորհակալ եղաւ որ՝ իրեն անանկ սրա-  
տուական քահանայ մը և խելացի առաջ-  
նորդ մը գտեր է . ու գնաց իր տեղը :



## ԳԼՈՒԽ Դ

### Պատկերներ .

ՔԱՆԻ մը որ միշտ ջերմեռանդ քահա-  
նային խրատները մտածեց Յակոբ , ու  
միտքը դրաւ որ անկէ ետև անոր խրատ-  
ները բռնէ , վերջը նորէն դարձաւ անոր  
քով , որ իր սաստիկ զղջմանը վրայ շատ  
կը վարմանար . վերջը անոր մէկ քանի հո-  
գևոր գիրքեր տուաւ որ իր քարայրին մէջ  
երթայ կարդայ . ցցուց անոր սրբոց վարք  
մը . “ Խելացին , ըսաւ քահանայն , աղէկ  
գիրքեր կարդալով ա՛լ խելացի կ'ըլլայ , գէ-  
շը՝ գէշ գիրք կարդալով՝ աւելի գէշ կ'ըլ-  
լայ ” : Աս քահանայն պատկերք կը սիրէր ,  
անոր համար բոլոր տունը պատկերներով  
զարդարեր էր . որոնց մէջ կային աղուոր  
պատկերներ ալ Քրիստոսի չարչարանքին  
ու սրբոց մարտիրոսութեան : “ Դժճայրա ,  
ըսաւ քահանայն , երևելի՛ պատկերահան  
մին էր , անոր համար ինձի ալ շատ պատ-

կերբ ինկաւ անոր քաշուածներէն . անկէ ՚ի զատ երբոր յարմար պատկերք մը տեսնամ մէկէն կը գնեմ . և որովհետև ես ալ քիչ մը պատկերահանութենէ կը հասկնամ՝ պարապ ատեն որ գտնեմ կը նկարեմ » : Աս ըսելով սկսաւ պատկերները ցուցնել , ու անոնց ինչ ըլլալը զուրցելով . « Տես , կ'ըսէր , սա Յիսուսը , ինչպէս մեր մեղքերուն համար կը համբերէ . նայէ սա սուրբ Աստուածածնայ , ինչպէս կուլայ , չէ թէ Յիսուսին վրայ , հասարակ մեղի պէս մեղաւորներուն » : Աւ անանկ շնորհքով կը զուրցէր քահանայն՝ որ կարծես թէ պատմածները աչքով տեսեր է . ու լսողներն ալ կը տեսնան : Թէ որ կին մը գար սիրտը կտորած իրեն գանգատէր թէ՛ տղաս ոչ խօսքիս մտիկ կ'ընէ , ոչ յանդիմանութեանս , չի յտեմ ինչ ընեմ . քահանայն կը ցուցնէր անոր սրբուհոյն Մոնիկայի պատկերը . « Այլ , կ'ըսէր , սա Օգոստինոսին որ սրբուհոյն Մոնիկայի որդին է , պզտի տղայ չէ որ մայրը զինքը պատժէ , յանգիմանելով չի կրնար անոր խելքը գլուխը բերել . յոյսը բոլոր Աստուծոյ վրայ կը գնէ : Արբոր տղաք մեծնան՝ ծեծը ի-

բննց չազդէր, թէ որ դուն ալ ծեծով  
ուզես զանոնք շտկել, աւելի կը չարանան :  
Վայէ սուրբն Մոնիկա ինչպէս Մատուծոյ  
աղօթք կ'ընէ որ տղուն միտքը լուսաւորէ,  
բոլոր անոր վրայ ասպաւինած ամենեւին չի  
յուսահատիր, ոչ կը նեղանայ, ոչ կ'անի-  
ծէ զանիկայ՝ որ իր ցաւերուն պատճառն  
է, համբերութեամբ ամէն բանի կը յաղ-  
թէ. տես ինչպէս կուլայ, ինչպէս Մա-  
տուծոյ կ'աղաչէ. Մատուած ալ աս կնկա-  
նը համբերութիւնը տեսնալով՝ ուզածը կը  
կատարէ. հիմայ ասդիի պատկերքիս մէջ  
տես, սուրբ Մոնիկայի ուրախութեան  
լայր, որ լացաւ երբոր տղան մոլորութե-  
նէն դարցած՝ ապստղխարանքով ուզեց ը-  
րած մեղքերը քաւել : Դուն ալ աս սուրբ  
կնոջը նմանէ, ամենեւին մի յուսահատիր,  
լաց որդւոյդ համար, Մատուծոյ աղաչէ  
ջերմօանդութեամբ. ան ատենը կը տես-  
նես որ ինչպէս տղոցդ խելքը գլուխնին  
կու գայ, ան ատենը դուն ալ սրբուհւոյն  
Մոնիկայի պէս ուրախութենէդ կը սկը-  
սիս լալ :

Օ՛աւելի տէր մարդկանց՝ զհայրն Աբ-  
րահամ օրինակ կը բերէր, որ իրեն ամե-

նէն սիրելի բանը , մէկ հատիկ խաահակը՝  
 յանձն առաւ զոհելու . “Նայեցէք , կ'ը-  
 սէք , աս սրտակերիս վրայ , ինչպէս խա-  
 հակ փայտերը շաղակն առած կերթայ . տե-  
 սէք ծեր հայրն ալ ինչպէս աչքերը երկինք  
 վերուցած կը նայի . բայց նայուածքէն  
 կ'իմացուի որ բոլորովին Աստուծոյ վրայ  
 վստահ է : Թէ որ դուք ալ , սիրելի  
 զուկրներս , ձեր սիրական բանը Աստու-  
 ծոյ զոհելու սրտորաստ ըլլաք , և Աք-  
 րահամ նահապետին հաւատքը ունենաք ,  
 ապահով կեցէք որ արքայութիւնը ձերն  
 է , : Տղոց և աղջկանց . Տորխային սրտ-  
 կերը կը ցուցնէր , և անոր սրտամութիւնը  
 կը պատմէր . անանկ որ ամէնն ալ անոր  
 սրտամութիւնը գիտէին , ու միշտ սրտ-  
 կերը կը յիշէին :

Ահա ասանկ ալ Յակոբին ամէն ան-  
 գամ ուրախութեամբ կը ցուցնէր աս  
 սրտակերները . ան ալ զարմացած կը նայէր  
 անոնց վրայ , և երբոր իր տեղը կը դառ-  
 նար՝ անոնց վրայ կը մտածէր . բայց աւելի  
 Քրիստոսի չարչարանքին , և մարտիրոսաց  
 և ասպաշխարող սուրբերուն սրտակերքնե-  
 րուն զարնուել էր . “Աս սուրբերը , կ'ըսէր ,

խմ մեղքերուս և ոչ մէկ սղտիկ մասը ըրեր  
 են, և սակայն ինք զինքնին այսպէս տան-  
 ջեր են. իսկ ես՝ որ ամէն մեղք ըրեր եմ,  
 դեռ ասպաշխարութեան ճամբան նոր ելեր  
 եմ,, : Քահանայն երբոր ուղէր Յակոբը  
 քիչ մը զուարթացրնել՝ մարտիրոսաց պատ-  
 կերները չէր ցուցներ որ անոնց տանջանք-  
 ները տեսնալով չի տրտմի : Հատ հեղ-  
 ալ անոր կուտար պատկերներ որ իր քար-  
 այրը դարդարէ :

Յակոբ քահանային հնազանդելու հա-  
 մար՝ սկսաւ աշխատանքի ալ . փայտէ  
 դգայներ, դանակի կոթեր կը շինէր, վրան  
 խաչելութիւն մը, կամ Աստուածածին և  
 Յիսուս փորած . ասանցմէ ՚ի զառ մեծ  
 սղտիկ կողովներ կը հիւսէր, և մեծերուն  
 վրայ կը հիւսէր Յիսուս խաչը շարկած,  
 որպէս զն, կ'ըսէր, ծանր բեռ տանողները  
 մտածելով թէ՛ Յիսուսի Գողգոթա տա-  
 րած խաչը ալ ծանր էր՝ չի դանդաղին .  
 յիշեն թէ Յիսուս ինչպէս առանց տրո-  
 ւանջալու մեր մեղքին համար համբերեց :  
 Արբոր հագւոր հովիւր իր ժողովրդոցը  
 տունը Յակոբին շինած խաչելութիւնները  
 կամ արձանները կը տեսնար, սիրտը կ'ու-



րախանար . “ Աս պատկերները , կ'ըսէր ,  
 պէտք է որ ձեզի անանկ աղուոր մտած  
 մունքներ բերեն , որ ոսկին ու արծաթը  
 յիշէք . վասն զի ասոնք ձեզի կ'առաջնոր  
 դեն ձեր տղաքը կրթելու . պէտք է որ դուք  
 պատմէք իրեն թէ աս խաչելութիւնը ինչ  
 կը նշանակէ : Տղաքը զանոնք տեսնելով ու  
 լսելով՝ շուտով միտք կ'առնուն ու չեն մոռ  
 նար . թէ որ շատ հեղ մեղաւոր մարդիկ  
 Յիսուսի խաչելութեան ու մարտիրոսներուն  
 շարչարանաց պատկերները տեսնելով զըզ  
 ջումի եկան , ևս առաւել տղաքը՝ որոնց  
 սիրտը մաքուր և անմեղ է , ասանկ բաներ  
 լսեն՝ զգաստ ու խելացի կ'ըլլան , : Այս  
 պէս ալ Յակոբ իր բարեկամին կնկանը  
 համար շատ բաներ շինեց , որովհետև իր  
 կերակուրը ան կը հոգար . քանի անգամ  
 որ ընկերը , որուն անունը Յոհաննէս էր ,  
 Յակոբին շինած բաները կը բերէր տղոցը  
 տալու համար , կինը ուրախութենէն ընե  
 լիքը չէր գիտեր , ու տղոցը կը պատմէր  
 թէ ան արձանները ինչ կը ցուցնեն : Տը  
 դաքն ալ շատ անգամ հօրերնուն կ'աղա  
 չէին որ զիրենք Յակոբին տանի տեսնելու .  
 ան ալ առաջուց ուզեց հարցնել անոր թէ



արդեօք կ'ուզէ՞, չէ՞ նէ չէ : Յակօր ալ  
“ Ի՞նչու չէ, ըսաւ, Յիսուս ալ քանի որ  
աշխարհքիս մէջ էր տղոց վրայ գովթ ցը-  
ցուց . ես որ աշխարհիս մեծագոյն մեղա-  
ւորն եմ, ամօթ չէ՞ ինծի թէ որ չուզեմ  
ատ անմեղներուն հետ տեսնուիլ ,, :

Այլ քանի օրէն վերջը կիրակի իրիկուն  
մը ծերը ելաւ հինգ տղաքն ալ առաւ,  
կինը միայն տունը թողուց՝ ու Յակօրին  
գնաց . անդրանիկ տղան ըսաւ իր սգտի  
եղբարցը . “ Վիտէք այսօր ուխտի պիտի  
երթանք ,, . ու նոր զգեստները հագաւ,  
զլուխն ալ նոր զարդարուն գլխարկը դը-  
րաւ . որով կ'ուզէր խմայնել Յակօրին՝ թէ  
հայրը իր վրայ գոհ է : Իրմէ վերջը քոյր  
մը ունէր, անկէց վար Ա 4 տարուան Յով-  
սէփ անունով եղբայր մը . որ ամէնէն եւել  
մօրը սիրականն էր . որովհետեւ շատ ա-  
ղօթք կ'ընէր : Ստեփանը իբր Ա 3 տարուան  
սուր խելք մը ունէր, ու անանկ յիշողու-  
թիւն մը՝ որ կիրակի օրերը քարոզէն վեր-  
ջը տուն գալով ըսածին մեծ մասը բեր-  
նուց կը զրուցէր . ամէնքնալ զեղին միջ  
անուն հաներ էին, անանկ որ մայրերը  
զասոնք իրենց զաւկներուն օրինակ կը բե-

րէին : Աս անմեղ գառնուկները չէին կրօնար հաւտալ՝ թէ աշխարհիս մէջ անանկ չար մարդիկ կան , որ ուրիշները կը խաբեն , կը զրկեն և ինչուան կը սպաննեն ալ . սուտը ինչ բան է չէին գիտիր . չունէին : Աւ որպէս զի միշտ անմեղութեամբ երթան՝ իրենց ծնողքը խրատներ կուտային , բայց անանկ անուշութեամբ որ տղոցը լալը կու գար ուրախութենէն . “ Աան կան , կ'ըսէր հայրերնին , աշխարհքիս մէջ անանկ չար մարդիկ , բայց իրենց գործքը շատ չի քշեր . վասն զի Աստուած որ ամէնը գիտէ ու կը տեսնէ , զանոնք անպատիժ չի թողուր , և վերջը գժօխք կը ձգէ , ” : — Ամենէն սլլաթիկ տղան Ա տարուան էր , անունը Արոյուս , աս ալ Ատեփանին սէս սրամիտ էր , բայց աւելի տաքարիւն և զուարթ , ու նոյնպէս խելացի և անմեղ : Անանկ սլատութիւններ կը սլատմէր որ ամէնքն ալ կը զուարճանային . երբ ծնողքը հիւանդութիւն կամ նեղութիւն մը ունենային , քովերնէն չէր բաժնուեր , զուարճալի կատակներով և սլատութիւններով ցաւերնին մոռցնել կու տար . ինքն ալ անոնց ուրախութեանը վրայ կը զուարճանար :

Այն օրն որ պիտի գային՝ Յակոբ դը-  
րեթէ քսան անգամ մը ելաւ քարայրէն  
նայելու թէ կու գան մի՞ վերջապէս հե-  
ռուէն տեսաւ , “ Հա , անոնք պիտի ըլ-  
լան , ըսաւ , ու մէկէն վազեց իր բարերա-  
րին դիմացը՝ շնորհակալ եղաւ որ այսպէս  
տղոցը հետ իրեն կու գար , :

Արք քարայրին քով հասան , տղաքը  
գետինը նստեցուց , ինքն ալ անոնց հօրը  
հետ քովերնին նստաւ . տղաքը աս ճգնա-  
ւորը երբ տեսան՝ շատ զարմացած կը նայէին  
վրան անուշ աչքներով ու անմեղութեամբ .  
անդրանիկը քթին տակէն եղբարցը ըսաւ  
թէ . “ Աս ճգնաւորը մեր պատուելի ժո-  
ղովրդապետին կը նմանի , : Յակոբ աս  
անմեղ տղաքը տեսնելով սիրտը տրամու-  
թեամբ լեցուեցաւ , վասն զի միտքը կու-  
գար թէ ինչպէս ինքն ալ ան տարիքին  
մէջ անմեղ էր , ու վերջը այնչափ անկար-  
գութիւն ըրաւ որ , պէտք եղաւ ասանկ  
նեղութեամբ զղջում ընէ : Կարողոս ,  
Յակոբին տրտում լուս կենայլ տեսնա-  
լով , ըսաւ . “ Հայր ճգնաւոր , մենք հոս  
եկանք զքեզ տեսնելու , և քեզմէ զուար-  
ճալի պատմութիւններ լսելու , թէ որ գուն

չիյտես՝ ես աղէկը գիտեմ, կ'ուզես՝  
 պատմեմ,, : Ամէնքն ալ աս խօսքին վրայ  
 սկսան ծիծաղիլ : Յակոբն ալ ծիծաղի-  
 ցաւ անոնց յարմարելու համար . ու շատ  
 աղէկ , սխառմէ ըսաւ : Արարչոս ալ , սխ-  
 տասխանեց . « Թէ որ կ'ուզէք սկսինք , բայց  
 առաջ պէտք է քիչ մը բան ուտել .  
 ես երբոր լսեցի թէ քեզի պիտի դանք ,  
 ուրախութենէս կերակուրի ատեն ուտելը  
 մոռցայ , բայց հիմայ հետերնիս ամանով  
 կաթ բերեր ենք ու ձերմակ հաց , կարագ  
 ու պանիր , ասոնք մայրերնիս տուաւ , որ  
 ձեզի բերնք , և եթէ կ'ուզես մէկ տեղ ու-  
 տենք ,, : Եւս մը տղաքը հացը հանեցին  
 կտրեցին մեծ պնակի մը մէջ , որ Յակոբ  
 շիներ ու անոնց մօրը դրկեր էր . ամէնքն  
 ալ սկսան աղէկ մը ուտել . Յակոբին ալ  
 մաս հանեցին . կաթը խմելէն վերջը՝ Ար-  
 արչոս Յակոբին ըսաւ , թէ . « Իրաւցընէ  
 կաթը շատ համով եկաւ , բայց աշխարհքիս  
 մէջ կարագ ու պանիրէն աղէկ բան չի-  
 կայ ,, . աս ըսելով սկսաւ յորդորել որ  
 ինքն ալ ուտէ : Ստեփանը ու Յովսէփը  
 կ'ըսէին թէ կարագով մեղրը աւելի հա-  
 մով է . ինչ որ է նէ . Յակոբ ասոնց սիր-

տը չի կոտրելու համար՝ քանի մը պատահա  
ծամեց : Աւտելէն վերջը , Յակոբ սկսա  
լսել անոնց . “ Սիրելի տղաք , երանի  
կու տամ ձեզի՝ որ այսպէս աղէկ ծնողք  
ունիք . նայեցէք որ անոնց խրատին ա  
կանջ դնէք . չար ընկերներու հետ չի  
տեսնուիք , չըլլայ որ զձեզ ալ իրենց պէս  
չար ընեն . թէ որ ես ալ իմ ծնողացս մտիկ  
ըրած ըլլայի , հիմայ կեանքս հոս չէի ան  
ցընել . բայց ես միշտ Աստուծոյ կամքին  
դէմ ապրեցայ , մոռնալով իր բարիքները :  
Հիմայ ինձմէ օրինակ առէք , տղաքս , և  
միշտ Աստուծմէ վախնալով նայեցէք որ  
ձեր անմեղութիւնը չկորսընցընէք : Իմ  
ծնողքս ինձի որչափ աղէկութիւն ըրին՝  
ես անոնց ներհակ՝ սրտերնին կոտրեցի .  
իմ հայրս կողով հիւսող էր , ինձի ալ  
սորվեցուց իր արհեստը . բայց ես ծոյլ  
էի , չէի ուզեր աշխատիլ , հապա կ'ուզէի  
որ խելքիս փչածը ընեմ՝ անոր համար  
Աստուած ալ ինձի բարկացաւ , ու պէտք  
եղաւ որ աս քարայրիս մէջ մեղքերս լամ :  
Մեր գեղի ժողովրդապետն ալ իմ դէշու  
թեանս համար զիս չէր սիրեր , ինչուան  
ժամէն ալ վռնտեց , որովհետեւ հոն խա

ղալու համար կ'երթայի, չէ թէ աղօթք  
ընելու. այնչափ անուճու ելեր էր որ, տղայ  
մը յանդիմանել ուղէին, կողով հլասողին  
տղուն կը նմանիս կ'ըսէին: Տեսա՞ք, տղա-  
քրս, չարերուն հետ ընկերութիւն ընելը  
ինչ գէշ բան է. անոր համար ձեզի ըսի  
թէ փախիք անոնցմէ: Քանի որ տարիքս  
մեծցաւ, ես ալ այնչափ անկարգ ծոյլ,  
հարարտ ու կամապաշտ եղայ. մատիս  
մատնի կ'ուղէի, գլխարկիս աղուոր ժա-  
պաւէն մը՝ փայլուն ոտքի ամաններ. հայրս  
ստակ չէր տար որ ուզածներս գնեմ, ես  
ալ սկսայ գողութիւն ընել, և ասանկ ա-  
ռաջ գացի, բայց բանը իմացուեցաւ. վառն  
ղի ան վաճառականը ուսկից մատնին ու  
գլխարկիս զարդը գողցեր էի՝ եկաւ հօրս  
գանդըտելու, ան ալ աղէկ մը զիս յան-  
դիմանեց, որ մէյմ՝ ալ անանկ բան չընեմ.  
բայց ես ալ աւելի նեղայայ և ուղեցի որ  
հօրս քովէն փախչեմ երթամ, ասանկով  
տունէն ելայ երթալու որ աշխարհքիս  
մէջ ինքիր գլխուս բաղդս գտնեմ: Բայց  
շատ ծանր նստաւ ինձի իմ անհնազան-  
դութիւնս, գողութիւնս ու աստերակ-  
տութիւնս. վառն զի աշխարհքիս վտան-



գաւոր աղիքներուն մէջ ինկած՝ հոգիս  
ալ մարմինս ալ կորսնցնելու հետ էի :  
Ահա ասոր համար նորէն կ'ըսեմ ձե-  
զի , սիրելի տղաքս , հնազանդ եղբք ձեր  
ծնողայր , փախէք գէշ ընկերներէն . թե-  
որ խելքով ապրիք՝ Աստուած միշտ հետե-  
նիդ կ'ըլլայ , առողջութիւն ալ , ամէն  
հարկաւոր բան ալ կու տայ ,, :

Յակոբ խօսքը լումնցրնելէն վերջը՝ գնաց  
քարայրէն շատ մը արձաններ բերաւ , ու  
րոնց վրայ աղէկ աշխատեալ էր , անանկ  
որ տղոցը հայրն ալ զարմացաւ . աս  
արձանները ան տղոց սլաշտպան սուրբե-  
րուն սլառկերքն էին , ուստի ամէնուն իրը  
տուաւ . մէկ աղուոր սուրբ Աստուածած-  
նայ արձան մ'ալ տուաւ որ մօրերնուն  
տանին , որուն անունը Մարիամ էր :  
“ Բաւ սլաշտպանիդ արձանն ալ շինելու  
հետ եմ , ըսաւ բարեկամին , մէյմ'ալ գա-  
լու ըլլաս լումնցած կ'ըլլայ ,, : Տղա-  
քը շատ ուրախացան աս արձաններուն  
վրայ , Սանփանն ալ ամէնուն կարդաց  
ինչ որ Յակոբ անոնց վրայ գրեալ էր :  
Վերջը աղաչեցին որ քարայրն ալ մտնեն .  
Յակոբ մտէք չըսած տղաքը վար ինչան ,



բայց հաղիւ ներս մտան՝ վախերնէն դուրս  
փախան : Աամաց կամաց տուն դառնալու  
ատենն ալ եկաւ , տղաքը երթալու ատեն  
Յակոբին շատ շնորհակալ եղան , որ զիրենք  
ասանկ պատուեց , և իրենց տուաւ պաշտ-  
պան սուրբերնուն գեղեցիկ արձանները :



## ԳԼՈՒԽ Ե

Զմեռ.

ՅԵՎՈՐ միշտ կը ջանար որ աշխատանքին մէջ իր գղջումը չի մոռնայ, և որպէս զի միշտ սիրտը կոտորած մնայ՝ ամէն օր ըրած անխելքութիւնները կը յիշէր : Աս խորհուրդը իրեն խոստովանահայրը տուեր էր . անոր համար աս ջերմեռանդ ճրգնաւորը ինչուան աղօթքին ատենն ալ մեղքերը աչքին դիմացը կը դնէր . և անով Աստուծակ շնորհք կ'առնուր : Միտքը կը բերէր զինետուններու մէջ թաւապիտ հետ ըրած անկարգութիւնները . բազմութեան դիմաց ըսած անուայել խօսքերը, և իրակ խաբուած մարդիկներուն խեղճութիւնը, կ'ըսէր ինքն իրեն . ինչ չար խրատներու օրինակներ տուեր նմ իմ հասակակիցներու . ես արդէն մեղքերու մէջ թաղուած ըլլալով, պէտք էր որ զուրիշներն ալ մոլորցնէի . քանի՞ քանի տղաք իմ

Ժուռ խօսքերովն աղէկ ճամբէն ետ կիցան .  
Թէ որ միայն իմ խաբածներս մոլորէին ,  
կարելի է անոնց մէկ ճար մը գանուէր ,  
բայց ո՛վ գիտէ անոնք ալ քանիններ խաբեր  
են : Իմ խենթ ու խերառ խօսքերս ամէնուն  
բերանը ինկեր են , մոլորութիւնները ուրիշ  
ներուն աղէկ բան մը երեցեր են , ո՛վ գիտէ՝  
նրչափ անկարգութիւններ եղեր է , որոնց  
պատճառը ես եմ : Ա՛հ , Տէր իմ գլխած ,  
գիտեմ ըրած յանցանքներս . ու հիմայ  
Յիսուսին խաչին վրայէն թափած արեա  
նը և իմ արցունքներուս մէջ՝ ոտքդ ընկած  
կը խնդրեմ որ դու իմ տուած գայթակղու  
թիւններս շտկես . որոնք որ ես մոլորցու  
ցեր եմ , դու զանոնք դարձուր նորէն քու  
շիտակ ճամբադ ու հաշտուէ անոնց հետ .  
ինչպէս որ ինձի բրի՛ր՝ անոնց ալ միտքը բայց ,  
որ իմանան ըրածնին : Թէպէտ և ես  
միայն մէկ մարդ մը մոլորցուցած ըլլայի՛  
անոր համար քաշած ցաւս ու զղջումս  
աշխարհէս ծանր պէտք է որ ըլլար . իսկ  
երբոր այսչափ չարիք ըրեր եմ , անոնց ի՛նչ  
ճար պիտի ընեմ . ո՛վ Տէր իմ , ի՛նչպէս  
զքեզ պիտի կրնամ հաշտեցնել . վասն զի  
չեմ ալ գիտեր թէ՛ արդեօք նրչափ մարդ

զլիւն հանեցի , ու քեզմէ հեռացուցի . և  
դուն սիրելի փրկիչ , դեռ իմ կեանքիս խը-  
նայեցիր , պէտք էր որ ինձի պէս անօրինին  
վրայ կայծակներ իջեցրնէիր , բայց դու գը-  
թութեամբ կեանքս ալ սրահեցիր , միտքս  
ալ լուսաւորեցիր : Ասոր համար կ'աղաչեմ  
տէր իմ , դարձուր զանոնք ալ իրենց գէշ  
ճամբէն՝ որոնք որ իմ խօսքովս կամ տուած  
զբքերովս խաբեցի ,, :

Յակոբ ամէն օր ասանկ երկայն աղօթք-  
ներ կ'ընէր Աստուծոյ , որ իր մեղքե-  
րուն թողութիւն տայ , և իրմէ խաբուած  
ներուն լոյս ու շնորհք : Միտքը անանկ  
Աստուծոյ սիրովը վառուած էր , որ ձմե-  
ռուան ցուրտը չէր իմանար , և կ'ուզէր որ  
բոլոր ձմեռը առանց կրակի անցրնէ . բայց  
իր հոգևոր հայրը ու բարեկամը թող չի  
տուին : Մէկ առաւօտ մը կանուխ ելա-  
ծեր տանտէրը , երկու մեծ տղաքը առաւ ,  
մէկուն տախտակներ տուաւ , մէկալին ալ  
սղգտիկ սրատուհան մը ու հիւսան գործիք-  
ներ , ու գնաց Յակոբին քարայրը , հե-  
տերնին մէկ անկողին մ'ալ առած : Յա-  
կոբ ալ օգնելով անոնց՝ քարայրին ծակերը  
անանկ աղէկ գոցեցին որ ներսը ամենեին

հով չէր մտնար . դռանը վրայ ալ սղտի  
ապակի մը դրին որ գիշերը լոյս առնու :  
“ Վիտայած ըլլաս , ըսաւ տանտէրը , մեր  
ժողովրդապետը ասանկ հրամայեց , վասն  
զի իրեն հետ ես աս բանիս վրայ խօսեր  
էի . սլատուիրեց ալ որ գիշերները աս սլա-  
տուհանիկն ալ գոցես : Աոյնպէս թէ որ  
ցուրտը կոխելու ըլլայ՝ աս անկողինն ալ  
սլիտի գործածես ,, : Տղաքը ասոնցմով  
ալ գոհ չեղան . “ Բոլոր ձմեռը , կ'ըսէին ,  
աս խեղճ ձգնաւորը առանց կրակի ի՞նչպէս  
սլիտի անցրնէ ,, : Չէին մտածեր թէ՛  
Քրիստոսի սիրոյն կրակը անոր սլտին  
մէջ կը վառէր , որուն բոցը՝ ոչ հով ոչ  
ձմեռուան ցուրտը կրնան մարել : Քիչ  
ատենէն իրաւցրնէ ցուրտը սաստկացաւ ,  
բոլոր գեղը ու արտերը ձիւնով ծածկուե-  
ցան . առուններուն ջուրերը սաղած սառե-  
ցան . այն տարուան ցուրտը չափէ դուրս  
եղաւ : Բայց Յակոբ կտրճու թեամբ կը  
համբերէր ինքը զինքը չարչարելով . ու  
երբոր քահանայն կամ իր բարեկամը այցե-  
լութեան կու գային , ամենեւին չէր դանդը-  
տէր , հասպա կ'ուրախանար որ մէկ երկու  
թեթեւ նեղութեամբ դժոխքին տանջանք .

ներէն պիտի խաղտի : Բայց ասոնցմով  
 ալ գոհ չըլլալով, աս ցուրտ ատենները կը  
 ջանար որ ալ աւելի ճգնութիւններ ընէ :  
 Արբեմն հիւսիսային հովը փչած ատենը  
 կ'երլար ժայռերուն գլուխը թռչունի մը պէս  
 կախուած անշարժ կը կենար . հովը վրան  
 կը փչէր, ձիւներ ամպի պէս վրան կը դառ-  
 նար, բայց ինքը հանդարտ կ'աղօթէր .  
 երբեմն ալ այն սաստիկ ձիւնի ատենը՝ իր  
 քարայրը կը թողուր, կ'երթար հովիւնե-  
 րու հետ՝ անտառին մէջ մոլորած ոչխար-  
 ները փնտտելու ձմեռուան երկայն գիշեր-  
 ները, երբոր չորս կողմի բնակիչները կրակի  
 քով քաշուած դռներնին ամուր կը գո-  
 ցէին որ չըլլայ թէ հով մը բանի . մեր  
 ճգնաւորը իրեն պատուհանն ալ բաց կը  
 թողուր, որ իր կանթեղին լուսովը՝ մութէն  
 ճամբանին կորանցրնողները գտնեն :

Ա՛հ կ'իրիկուն մ'ալ ցուրտը խիստ  
 սաստիկ էր . լուսինն ալ պայծառ, աստ-  
 ղերը փայլ փայլ կը վառէին . գուրսը ուրիշ  
 ձայն չիկար, բայց միայն չոր հով մը ժայ-  
 ոներուն մէջէն գոռալով կը փչէր . երբեմն եր-  
 բեմն ալ բաց տեղի մը զանգակատան զան-  
 գակին ձայնը կը լսուէր . մէկ մ'ալ յան-



կարծ ճգնաւորը ներսէն ցաւազին ողբի ձայն մը լսեց, մէկէն դուրս ելաւ տեսաւ որ խնդճ մարդ մը ձիւներու մէջէն հազիւ կրնար շարժիլ ժայռերուն զարնուելով: Աս մարդը մօտի գեղին վաճառականն էր, որ գիշերը անտառին մէջ ճամբան կորսընցուցած՝ ցուրտն ալ ոսկորներուն մէջը մտած գողգղալով կը սլտրտէր, անանկ որ սլաղէն սառելու վրայ էր: ճգնաւորը մէկէն վազեց քոյլը գնաց խմացուց թէ իր բնակարանը մօտ է, սկսաւ սիրտ տալ ու հետը մէկ տեղ քարայրը մտուց, կրակ վառեց, ու տաքցուց վաճառականը: “Ալ մի վախեր, ըսաւ Յակոբ, ահա քեզի բնակարան մը, վառք Աստուծոյ որ ասանկ առիթ մը գտայ իմ մէկ եղբորս օգնելու բացց կ'ուզեմ որ մէկ երկու պատառ բան գնես բերանդ,»: Աս ըսելով շուտ մը բերաւ անոր գլխացը դրաւ սլանիք, հաց և մէկ երկու չոր ստուղ՝ որ իր բարեկամը իրեն բերեր էր: ճամբորդը անօթի ըլլալով շատ շնորհակալ եղաւ, ու կուշտ մը ուտելէն վերջը, ըսաւ. “Չիյտեմ ինչպէս քեզի կրնամ շնորհակալ ըլլալ՝ ըրած բարիքներուդ համար, ևս աս մօտիկ գեղիս վա-

Ճատականն եմ, և հինգ զաւակ ունիմ՝ որ  
իմ ձեռքէս կ'ապրին, վայ իմ գլխուս, թէ  
որ Աստուած զքեզ խրկելու չըլար, վասն  
զի անշուշտ պիտի մեռնէի. անոր համար  
Աստուծակ վերջը քեզի պարտական են իմ  
ընկերս ալ զակրներս ալ, որ իրենց հայրը  
ազատեցիր. ալ ի՞նչ ըսեմ, Աստուծոյ օրհ-  
նութիւնը միշտ վրադ ըլլայ, : Յակոր  
ալ խոնարհութեամբ ըսաւ. “ Այս ալ  
ողորմելի մեղաւոր մըն եմ աղօթքիդ կա-  
րօս. և շատ կ'ուրախանամ որ Աստուած  
իմ ձեռքովս խալսեց զքեզ՝ որ բոլոր ընտա-  
նեացդ յոյսն ես. բայց հրամանքդ հիմայ  
յօգնած պիտի ըլլաս, անոր համար աս  
գիշեր իմ անկողինս քեզի ըլլայ, ես մէկ  
հարկաւոր գործք մը ունէի ընելու որ  
արգիլուեցաւ, հիմայ կ'երթամ անոր, :  
Վաճառականը առաջ չուզեց ճգնաւորին  
անկողինը պատկիլ ու զինքը գուրսը թո-  
ղուլ, թէպէտ ան ուրիշ գիշերներ ալ հա-  
զիւ քիչ մը կը քնանար. բայց Յակոր  
ստիպեց զանիկայ, ան ալ արգէն յօգնած  
ըլլալով՝ մտաւ ու մէկէն քունը տարաւ :  
Իսկ ճգնաւորը բոլոր գիշերը աղօթքով ան-  
ցընելով, երկրորդ օրը վաճառականին նա-

խաճաշիկ մ'ալ տուաւ, ու ինչուան անտառին ծայրը մէկտեղ դնաց. և մինչև որ անոր ուրախ ու հանգիստ գեղի ճամբան բռնելը չի տեսաւ ետ չիդարձաւ :  
Ետևէն նայելով, « Օրհնած ըլլայ, կ'ըսէր, Եստուծոյ նախախնամութիւնը. ինչուան հիմայ ես ընկերներս մօլորցընել ջանացեր էի, և արժանի չէի որ Եստուած զիս սպտորաստէ, աս խեղճ մարդս ազատելու և ողջ առողջ իր տունը դարձրնելու. բայց Եստուած ողորմեցաւ ինձի ալ, անոր ալ » :



## ԳԼՈՒԽ Զ

Երկուս ձգնաշորներ .

ՅԱԿՈՐ տարի մը աս քարայրին մէջ մեղքերը լալէն ու զղջալէն վերջը , որ մը խոտտովանահայրը իրեն այցելութեան եկաւ , հետն ալ նոր նկարած պատկերք մը բերաւ . աս պատկերքը կը ցուցնէր Յակոբին տեսած երազը որ քարայրը մտած օրը տեսեր էր . Յակոբին ալ ասկէ մեծ և աղէկ ընծայ մը չէր կրնար ըլլալ , որ ուրախութենէն լալով , “ Շատ աղէկ է , ըսաւ , բայց մէկալ դայը՝ երբ ոչխար սխտի դառնայ , : Անիկայ ես չեմ գիտեր , ըսաւ Հովիւր , սէտք է համբերութեամբ սպասել . դուն նայէ որ ամէն օր անոր համար աղօթք ընես , ինչպէս ես ալ կ'ընեմ՝ , և ամէն օր սխտարագիւս մէջ Աստուծոյ կ'աղաչեմ , որ զան ալ զղջումի բերէ : Աստուծոյ ամենէն հաճոյ աղօթքը՝ եղբօրներուս համար ըրածնիս է . և ա-

տանկ ատինն Աստուած աւելի շնորհք կու տայ մեզի : Քաճանային աս այցելութեան օրը՝ Յակոբին ամենէն սուրբ օրերուն մէկը եղաւ :

Արկրորդ օրը մէկ մեծաճասակ մարդ մը եկաւ Յովհաննէսին տունը . տղաքը անոր աճաղին նայուածքը տեսածնուն պէս լեղատառտաւ եղան , Ստեփանը վազեց կամացուկ մը մօրը ըսաւ , թէ “ Հօրս սննեակը մարդ մը եկեր է կը խօսի , բայց որչափ որ Յակոբ մեզի սիրելի եկաւ , այնչափ ալ ասիկայ ատելի երևցաւ . թէ որ հօրս ըսածին պէս աշխարհքիս մէջ գէշ մարդ կայ՝ կարծեմ ասիկայ գէշէն գէշը պիտի ըլլայ ” : Մայրն ալ գնաց տեսնալու թէ ո՞վ է եկողը : Աս մարդս եկեր էր Յակոբ անունով մէկը փնտռելու՝ “ Տարի մըն է , որ կը փնտռեմ , ըսաւ . և վերջի անգամ աս գեղին մօտ՝ մէկտեղ էինք , ես քիչ մը քուն ըլլալէս ետքը , արժընցայ նայեցայ որ անիկայ աներևոյթ եղեր է , չիյտեմ գետինը անցեր է , հովը տարեր է , ուր կորսուեր է . սրբապը գնաց այնչափ ասղիս անդին դառնալ փնտռելս , տեսնող մ՝ ալ չի գտնուեցաւ . անանկ բարկացեր

եմ վրան, որ կարելի ըլլար՝ գլուխը կայ-  
ծակներ սլիտի թափելի, բայց ամէն բան  
անօգուտ: — Բու բարկութեանդ արժա-  
նի պատիժ էր, ըսաւ Յոհաննէս, որ  
զինքը չես գտած, բայց իմ տղոցս գլխացը  
կ'աղաչեմ աս լեզուով մի խօսիր: — Ա-  
նանկ է նէ աս ալ մտիկ ըրէ, ըսաւ օտա-  
րակներ, դուն ալ տղաքդ, ալ կըրնաք ըսել-  
ես սատանայ չեմ որ ինձմէ այսչափ կը  
վախնան: Արեկ իրիկուն աս տեղը մօտ  
գինետուն մըն էի, տեղին տէրն ալ ուրիշ  
չատ մարդիկ ալ զիս ճանչցան, ինձի պատ-  
մեցին թէ աս տեղի ժողովրդապետը անցած  
տարի զիս շատախօս խաբերայ մը սեպեր  
է. ու ըսեր է եղեր, թէ ես սուտ ու  
գէշ գեղեր կը ծախեմ՝ եղեր, սուտ զրուցեր  
է,, : “ Զէ, բարեկամ, ըսաւ տանտէրը,  
մեր ժողովրդապետին վրայ չեմ ուզեր որ  
ատանկ բան խօսիս. թէ որ հարկաւոր  
հարցընելու բան մը ունիս՝ շուտով զրուցէ,  
չէ նէ բարով եկար բարով երթաս. իմ  
տունս դեռ քիզի պէս անօգուտ բերնով  
մարդ չէր եկած,, : Թողութիւն ըրէ, ըսաւ  
օտարակներ շփոթած կերպով մը, մէկ  
խօսք մ'ալ ըսեմ, երեկ գիշեր գինետան



տիրոջը ու ինձի հետ խամոզներուն պատմեցի թէ՛ տարի մը առաջ աս մօտ տեղերս մէկ ընկեր մը ունէի կորսնցուցի . անոնք ալ հարցուցին թէ՛ գտա՞ր մի . ես ալ չէ՛քսի , տարի մըն է որ կը փնտռեմ չեմ գտներ :

Վինետան տէրն ալ ըսաւ թէ՛ ես այսչափ դիտեմ , որ մեր ժողովրդապետը ըսաւ թէ՛ ան երկու խաբեքայ շատխօսներուն մէկը՝ տարի մը կայ որ մեղքերը կը զղջայ մէկ տեղ մը քաշուած : Հոն գտնուող գեղացիներէն մէկն ալ ըսաւ , թէ՛ ան մարդը հրամանքիդ տունը տեսեր է եղեր , և ինքն ալ մէկ մօտ անտառի մը մէջ կը բնակի , ու մեծ ճգնաւոր մը եղեր է . դուք ալ զինքը կը կերակրէք եղեր , ու մէկզմէկու հետ մեծ բարեկամութիւն կապեր էք : Ահա ինձի ասոնք գեղացին պատմեց , ուստի կ'աղաչեմ որ զիս մէյ մը սա խենթին քուլը տանիս :

Յովհաննէս ան ատեն մէկէն խմացաւ թէ՛ ասիկայ է Յակոբին յիշած ընկերը , ու մտքէն ըսաւ . “Աս դեռ քու վրայ չեմ տեսնար ան շնորհքը՝ որուն համար որ Յակոբ միշտ աղօթք կ'ընէ . բայց քուի

կրնամ տանիլ, կարելի է որ խելքդ գլուխըդ դայ ու ան սրբակեաց ասպաշխարողին նմանիս ,, : Աս ըսելով ելաւ ծերը երկու տղաքը առաւ, ու ան օտարականին հետ սկսաւ Յակոբին քարայրը երթալ :

Այն ատեն հասան, երբոր Յակոբ քահանային առջի օրուան բերած սլատկերքին դիմացը աղօթք կ'ընէր ու կ'ըսէր . “ Տէր Աստուած, ինձի ինչ հրաշք որ ըրիր աս դայլուն ալ ըրէ, ու հեզուկ ոչ խար մը դարձուր ,, : Աս ըսելու ատեն Յովհաննէս ներս մտաւ, ու կարճ խօսքով ամէն բան խմացուց : Յակոբ վեր ելաւ ու սանդուխին վրայ կեցաւ . բարեկամին խօսքերէն խմացաւ՝ որ թժամաս առաջ ինչ որ էր, հիմայ ալ նոյն մտքին վրան է . վերջը երբոր զինքն ալ տեսաւ խմացաւ որ առաջընէն աւելի դայլ է դարձեր : Բայց ինքը անուշ ու հանդարտ մը ըսաւ . “ Այն, թժամաս, այսպէս մէկզմէկ նորէն կը տեսնանք կոր : Միտքդ կու դայ որ քեզի հետ ինչ անկարգութիւններ ըրեր ենք . կ'ուզես նէ հիմայ ալ եկ՛ս որ մէկտեղ մեղքերնիս լանք : Իսկ թէ որ դուն չես ուզեր ասպաշխարողիւն ընել, ասկէ վերջը ինձի եղ

բայր մի ըսեր և ալ մի դար իմ հանդըստութիւնս խռովելու . , :

“ Թումաս՝ խննթեցեր ես ըսելով, սկըսաւ ծիծաղել . : Յակոբ ալ քարայրը մտաւ . Թումաս սանդուխին մտննալ սկսաւ , ճրգնաւորը մէկէն տանդուխը վերուց : Թումաս դուրս մնալով՝ սկսաւ բերնին եկածը դուրս տալ . չի ըսած յիշոյներով նախատել համբերող ճգնաւորը , անանկ որ դուրսի կեցողները զարմացած մնային : Իսկ աս չարը որպէս զի նորէն մոլորցընէ զապաշխարողը , սկսաւ անոր միտքը ձգել ըրած գործքերնին , վայլած զլուսանքնին . ու յորդորել՝ որ նորէն մէկտեղ գայ աշխարհք դառնան : Իսկ Յակոբին բարեկամը տղաքը առաւ , ու ետ դառնալու ատեն կ'ըսէր . “ Տեսա՞ք , տղաքս , չարն ու բարին մէկըղմէկու քով ինչպէս կ'ըլլան . տեսա՞ք մէկը ինչպէս անուշ է , մէկայլը ինչպէս կատրած գազան կը նմանի . , : Արբոր տուն դարձան , սկսաւ ըսել տղոցը . “ Չըլլայ թէ ըսած բաներնիդ բերաննիդ առնէք . վասն զի խօսքը մարդուս սիրտը կ'աղտոտէ , սրտանց ալ ըսուած չըլլան , ըսողներուն սրտին գէշ կու գայ . ասոր

Համար չըլլայ թէ կատակի Համար ալ ասանկ բան մը բերներնէդ ելլայ , :

Յակոբ քարայրին մէջ մէկ ծայրը քաշուեր էր՝ որ թոմաս զինքը չտեսնէ . և բոլոր օրը նեղութեան մէջ էր , վասն զի անչար մոլորցընողը անդադար կը կանչէր , կը պոռար , միայն գիշերը զինքը լուցուց , ու անբանի մը պէս գնաց ծառի մը տակ ինկաւ : Առաւօտը կանուխ նորէն դարձաւ ժայռին վրայ . Յակոբ բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ըրեր էր , որ այն անկարգն ալ ձամբու բերէ , ու առաւօտուան դէմ հաղիւ գլուխը քիչ մը վար դրեր էր , մէյմ՝ ալ թոմասին ձայնը լսեց , որ իրիկուրնէ աւելի սաստիկ կը պոռչտար : Իրիկունը նորէն քաշուեցաւ ծառին տակը . Յակոբ ալ նորէն գիշերն ՚ի բուն Աստուծոյ կ'աղօթէր անոր համար : Արբօրդ օրը լուսնալու ատեն , թոմաս կատղած արջու պէս վազեց այրին բերանը , ու կ'ըստպատնար թէ որ հետս չի դալու ըլլա՛ս՝ ա՛մենսինս զքեզ հանգիստ պիտի չի թողում : — Ա՛լ չի կրցաւ դիմանալ Յակոբ , ասդին եկաւ որ թոմասը տեսնէ զինքը , ու ըսաւ .  
“ Արտ/հետեւ այգպէս բռնութեամբ կ'ու

զես զիս , ահա ես ալ կու գամ , : Աւ  
մէկէն սանդուխը դրաւ ու դուրս ելաւ :  
Թամաս վազեց Յակօբին վեղը պրկուե-  
ցաւ , ուրախանալով որ նորէն իր հին ըն-  
կերը գտաւ : Այլ տեղ ժայռէն վար ին-  
չան . Թամաս հազիւ թող տուաւ որ ճրգ-  
նաւորը դառնայ մէկ մ'ալ նայի իր բնա-  
կարանին վրայ . կարծէր որ բոլոր սրտով  
իր ուղածները պիտի ընէ . և Յակօբէն  
խօսք առաւ որ իր բարեկամին տանը քովէն  
չանցնին : — « Այն միջոցին Յոհաննէան  
ալ իր տրնէն ելեր ճգնաւորին կերակուրը  
կը բերէր՝ մտածելով թէ անշուշտ օտարա-  
կանը գացեր է քովէն . երբոր այրին մտե-  
ցաւ , ականջ դրաւ , ձայն չիլսեց , « Աւ-  
րեմն , ըսաւ , Յակօբ մտածականի մէջ է ,  
արդեօք իմաց տամ , թէ չէ . ի՞նչ ընեմ ,  
պէտք է որ քիչ մը անհանգստութիւն  
տամ իրեն , » : Վշուխը վար կախելով ա-  
մէն ուժովը սկսաւ կանչել : Յակօբ բա-  
ր՛ի լոյս . բայց սխառասխան շոռաւ : Յո-  
հաննէս աս լուծենէն շատ վախցաւ ,  
այրը մտաւ , կանչեց , փնտռեց , ձայն  
ձուն չկաւ : Չէր գիտեր թէ աս ի՞նչ բան  
է , շուտով դուրս ելաւ . գիտէր որ Յակօբ

սովորութիւն ունի, ուրիշ տեղ մը աղօթքի  
կենալու, հոն վազեց. բայց հոն ալ չի գը-  
տաւ : Չըլլայ որ, ըսաւ, մէկալին ետեւէն  
գացած ըլլայ, ու որչափ որ շունչ ունէր՝  
սկսաւ պոռալով կանչել. դարձեալ պա-  
տասխան չառաւ. ասդիս վազեց, անդին  
վազեց. վերջապէս ոտքի նշաններ տեսաւ  
մէկ նեղուածք ճամբու մը վրայ քարայ-  
րին մօտերը՝ ու նշանն ալ երկու մարդու  
ոտքի էր. մտածեց որ Յակոբ (Թումասին  
հետ գացեր է. բայց ինչո՞ւ, կ'ըսէր աս  
որ գացեր են, վասն զի անկարելի է որ աս  
ոտքի նշանները երեկուրնէ մնացած ըլլան :  
Ասանկ տարակուսելով սկսաւ տուն դառ-  
նալ, որ կնոջը պատմէ եղածը. տղաքն  
ալ հոն էին, հօրերնուն պատմածը երբ լսե-  
ցին սկսան լալ. « Զեմ՝ հաւտար ըսաւ  
Մարիամ, որ Յակոբ ան օտարականէն  
խաբուած ըլլայ », : Ազտի տղան ալ ը-  
սաւ, « Յիսուս ալ անասրատին մէջը փոր-  
ձութիւն քաշեց, բայց չենք կրնար ըսել  
թէ հետեւեցաւ փորձողին », : Աս խօսքերս  
ամէնուն ծիծաղը բերին : — Յոհաննէս  
գնաց շուտ մը ժողովրդապետը գտաւ եւ  
դաճները պատմեց, սնն ալ վարմացաւ,



բայց ըսաւ թէ, « Իմին Յակոբս իր անմեղութիւնը կորսնցուցած չէ. և ոչ ալ խարուած է. Աստուած այնպիսի ջերմութեանդ մարդը՝ չի թողուր որ անանկ մեծ յանցանքի մէջ լինի. բան չիկայ, քիչ մը սպասենք: Իրիկունը նորէն մէյմը գնահայէ. վերջը ինձի խմացուր », :

Այն օրը Յոհաննէսին համար շատ երկայն կու գար, կ'ըսալասէր որ մէկ մը իրիկունը ըլլայ՝ որ քարայրէն լուր մը առնու. երբոր գիշերը մօտեցաւ, դարձեալ Յակոբին կերակուրը առաւ գնաց հոն, ճամբան տրամութեամբ կ'երթար, սիրար վախու և յոյսի մէջ կը ծփար. վերջապէս հասաւ քարայրը, հեռուէն տեսաւ որ Յակոբ ծունկ դրած թևերը վեր վերուցած լալով աղօթք կ'ընէ: Յակոբ ալ Յոհաննէսը տեսածին պէս՝ դիմացը վազեց ու ըսաւ. « Ասոր թող պիտի չխտամ քեզի որ ներս մտնես », — Ինչո՞ւ, ի՞նչ բան կայ որ ներս չմտնեմ: — Այլու սա ծառին տակը նստինք, ու ամէն բան քեզի պատմեմ: — Արբոր ծառին տակ նրստան, սկսաւ Յակոբ ըսել. « Այն ինձի բերած մարդդ այն առաւօտ ժայռին քովէն

չի հեռացաւ . ամենեւին զիս հանգիստ չի  
թողուց , միշտ կը կանչէր որ ելլամ հետը  
աշխարհք դառնամ . ես ալ աս առաւօտ՝  
շատ աղէկ կու գամ ըսի , : Արթաշու ատեն  
աս մարդը սկսաւ իր միտքը ինձի բանալ  
և կը ցուցնէր թէ ինչ ճամբով բոլոր աշ-  
խարհք կըրնանք խաբել . ես ալ ամէն  
ըսածներուն՝ աղէկ մտածեր ես կ'ըսէի .  
անանկ որ՝ միտքը դրաւ թէ , նորէն իմ հին  
ընկերս գտայ՝ որ մէյմ՝ ալ ինձմէ չի բաժ-  
նուիր : Արբոր աս անտառին մէկալ ծայրը  
հասանք , հարցուցի թէ . “ Ասոնք աղէկ  
են , բայց սրչափ ստակ ունիս , , . ինքն ալ  
ըսաւ թէ դահեկան մ՝ ալ չունիմ . “ Աւ-  
րինն՝ ըսի ես , անանկ շատ հեռու տեղ չեր-  
թանք , վասն զի ես ալ բան չունիմ . գիտէի  
որ դատարկ քսակը անոր բանին ձեռք չէր  
խտար : Միտքս բան մ՝ ալ եկաւ , ըսի ,  
աս գեղին ժողովրդապետը ինձի ուրիշ ըն-  
ծաներէն ի զատ աղուոր պատկերներ բե-  
րաւ , թէ որ աս պատկերները ծախելու  
ըլանք , թէպէտ և կէս գնով ալ ըլլայ ,  
շատ ստակ կը հանենք , , : Թամաս աս  
ըսածին պէս խելքը թռուց , ու մէկէն եր-  
թանք այրէն առնենք ըսաւ ատ պատկերնե-

ըր : Տօմաս ինձմէ կտրիճ՝ և ուժով ըլ-  
լալով՝ ուզեց որ ինքը ներս մտնէ և պատ-  
կերքները վեր տայ . միայն ինձի ըսաւ որ  
ամենէն աղուորները ըսեմ՝ իրեն , ես ալ  
ըսի ամէնն ալ աղւոր են , ամէնքն ալ պէտք  
է որ տանինք : Տօմաս շուտով սանդու-  
խէն ինչաւ , ես ալ կեցիք էի իբրև թէ  
պատկերները վեր քաշելու համար . բայց  
անիկայ ոտքը վար դրածին պէս , մէկէն  
սանդուխը վեր քաշեցի , ու ըսի . “ Տօմ-  
մաս , տեսա՞ր , հիմայ գբեզ բանտի մէջ  
ձգեցի . թէ որ կ’ուզես ինձի բարեկամ  
ըլլալ՝ նայէ որ հոն մեղքերդ զղջաս ,” :  
Անիկայ կարծեց թէ ես կատակ կ’ընեմ  
հետը , բայց իրեն նորէն ըսի . “ Տարի մըն  
է որ գլխեր ցորեկ քեզի համար զԱս-  
տուած կ’աղաչէի որ քեզի շնորհք տայ  
ու զղջումի գաս . ալ հիմայ գուն քու  
ճարդ տես , քու գլխած փրկչիդ աղաչէ  
որ թողութիւն տայ : Ի՞նչպէս յանդգնեցար  
ինձի նորէն եղբայր ըսել , ու բարեկամի  
պէս հետս երթալ . ես ի՞նչպէս կրնամ քե-  
զի բարեկամ ու եղբայր ըլլալ , երբոր Աս-  
տուած երկուքիս ալ հայր չէ . բայց գիտ-  
ցած ըլլաս որ գբեզ շատ սիրելուս համար

ատ բանտը դրի . հիմայ ատեն շատ ունիս , նայէ որ մեղքերդ լաս : Արբոր միտքդ փոխելու ըլլաս , թող կու տամ քեզի , որ դուրս ելես . երբոր սատանային ու քու չար կիրքերուդ ձեռքէն խալըսիս , ան ատենը ազատ կ'ըլլաս ,, : Ասոնք երբ լսեց իմացաւ թէ կատակ չէ , երեսը կախեց . բայց ես պատուհանն ալ գոցեցի . ու մէկ դի եկայ : Առջի բերանը սկսաւ պոռալ կանչւրոտել , բայց հիմայ հանդարտ կեցեր է : — Շիտակը չէի կարծեր որ քու քովդ ալ ասանկ վարպետութիւն կ'ըլլայ եղեր . բայց ես երբոր ժողովրդապետին քու երթալդ իմացուցի՝ ինքը ինծի ըսաւ թէ , պէտք է որ Յակոբ մէկ բան մը մտածած ըլլայ , թոմասը գղջուակի բերելու : — Բայց մենք հիմայ պէտք է որ ալ աւելի աղօթք ընենք . դու հիմայ դնա ընտանեացդ ըսէ որ ուրախ կենան , ես հոս եմ . վերջը ժողովրդապետին ալ պատմէ . անշուշտ ինքն ալ հիմայ աղօթք կ'ընէ . ահոր համար :

Յոհաննէս շուտ մը ելաւ տունը երթալու , ու հասածին պէս համարօտ կերպով եղածը պատմեւէն վերջը , կնոջը և տղոյր

պատուիրեց որ նստին աղօթք ընեն : “ Հիմայ ես ժողովրդապետին պիտի երթամ, ըսաւ, որ ինձի կ'ըսպասէ ” : Քահանայն երբոր Յոհաննէսին պատմածը լսեց՝ սկըսաւ ծիծաղիլ . “ Աս ալ՝ ըսաւ, աւելի ջերմեռանդութեամբ աղօթք կ'ընեմ, և ժամը ծանուցումն ալ կ'ընեմ՝ որ ամէնն ալ Աստուծոյ աղաչեն . կը յորդորեմ բոլոր ջերմեռանդները որ մեզի հետ աղօթք ընելով՝ մէկ տեղ ալ ուրախանան : Աւ աս իրէք որս աս դիտաւորութեամբս պատարագ կ'ընեմ՝ որ Աստուած Թոմասին զղջում տայ . կը հաւտամ որ Աստուած մեզի կը լսէ ” :

Թոմաս ինչուան կէս գիշեր չի կրցաւ քնանալ, մերջը քունը տարաւ, բայց որովհետեւ սիրտը դեռ Աստուծոյ դարձած չէր, այն անուշ քունը չի դտաւ : Հատ անգամ քունէն յանկարծ մեր ինկնելով կ'արթննար, մերջը նորէն կը քնանար : Առաւօտը եղաւ ասդին անդին դարձաւ նայեցաւ որ այրին մէջ լոյս չի մտնար . “ Հապա թէ որ դժօխք երթամ հոն ինչ պիտի ընեմ, ըսաւ, ուր որ ամենեւին լոյս չիկայ ” : Վերջապէս Աստուծոյ շնորհքը վրան ինջաւ, խելքը

բայուեցաւ . և սրտէն ան մը ըրաւ , ու սկսաւ լալ :

Յակոբ ալ իր աղօթքը լամնայրնելէն վերջը՝ գնաց այրին պատուհանը բանալու . տեսաւ որ թոմասին աչուրները լեցուեր է , ու իրեն կ'ըսէ . — Ալ զիս կրնաս աս քար այրէս հանելու , բայց դժոխքէն ո՞վ պիտի հանէ զիս : Յակոբ չի հաւտաց թէ սրտանց կ'ըսէ աս խօսքերը , ու պատասխանեց . — Թէ որ կ'ուզես՝ Աստուած կրնայ ազատել . ես ալ քեզի պէս դժոխքին արժանի էի , բայց Յիսուս զիս ազատեց , զքեզ ալ կրնայ ազատել : — Բայց իմ մեղքերս այնչափ մեծ ու շատ են , որ թիւն ալ չեմ գիտեր : — Արչափ ալ շատ ու մեծ ըլլան , Աստուծոյ ողորմութեանը չեն հաւասարիր : — Ինքը ողորմած է , բայց ես երբ արժանի չեմ , ինձի անկէ ի՞նչ կ'ելայ : — Յիսուս ամէնուն համար մեռաւ , մէկն ալ դուրս չի թողուց . ինչպէս ինձի համար արիւնը թափեց , անանկ ալ քեզի համար թափեց : — Բայց ես չեմ յուսար որ Աստուած ինձի թողութիւն տայ , այսչափ մեղք ընելէս վերջը . անկարելի բան է ներելը : — Աստուծոյ քով անկարելի



բան չկայ . ինքը կրնայ քեզի տալ հոգւոյդ  
փրկութեան յոյսը : — Վիտեմ որ Աստուած  
կրնայ , բայց արդեօք կ'ուզէ : —  
Չես կրնար իրեն աղաչել որ քեզի շնորհք  
տայ : — Արնամ , վասն զի հիմրկւրնէ  
կ'իմանամ կոր՝ որ վրաս մէկ նոր այլայլու  
թիւն մը եղաւ : — Վիտցիր սիրելի թա  
մաս՝ որ ան է Աստուծոյ շնորհքն , նայէ  
որ այն շնորհքը բանի բերես , աղօթքէ չի  
դադրիս . հիմայ ես կ'երթամ , դու նայէ  
որ միշտ զԱստուած աղաչես , և ամենեին  
չի յուսահատիս :

Թոմաս ալ Յակոբին խօսքին հնազան  
դեցաւ . մէկ նոր հիւանդութենէ ելած  
մարդու մը պէս որ քաշեր մոռցած ըլլայ ,  
ինքն ալ շատոնցուրնէ ի վեր աղօթք ըրած  
չըլլալով , մոռցեր էր : Օրոնկ դրաւ , աչ  
քերը երկինք դարձուց՝ սկսաւ Աստուծոյ  
զթութիւնը խնդրել . երկայն ատեն աղօթք  
ընելէն վերջը , Յակոբ՝ որ անոր համար  
հոգւոյն սրբոյ շնորհքը խնդրեր էր , եկաւ  
տեսնալու իր բանտած ապաշխարողը , ու  
վերէն տեսնալով որ Թոմաս հանդարտեր  
էր , ուրախութենէն ընելիքը չէր գիտեր .  
մէկէն վար ինջաւ , գրկեց զինքը ու ըսաւ .

“ Այ՛ն հիմայ ինձի կրնաս եղբայր ըսել . ես  
 քու բարեկամդ եմ , դու ալ իմ բարեկամս .  
 հիմայ նստէ հոս քեզի քիչ մը պտուղ բե-  
 րեմ , քիչ մը ջուր ու հաց , որ իմ բարե-  
 կամ տանտէրս երէկ քեզի համար բերեր էր .  
 հիմայ ես ալ իմ երջանկութիւնս դտայ , , :  
 Տօմաս հացը արցունքովը թրջելով , քիչ մը  
 բան կերաւ . ի՛նչպէս շնորհակալ ըլլամ  
 քեզի բարեկամ , ըսաւ , որ զիս քիչ մը  
 բանտելով յաւիտենական բանտին դուռը  
 դոցեցիր . հոս դտայ ես իմ երջանկու-  
 թիւնս : — Հասկա ես , ըսաւ Յակոբ , աս  
 քարայրը թագաւորներու պալատներու հետ  
 չեմ փոխեր . քանի որ Աստուած իր շնորհ-  
 քը զրկեց հոս իր ծառաները լուսաւորելու՝  
 անոնցմէ աղուոր ու յարգի եղաւ : — Ի-  
 ըրաւ հիմայ ատենն է որ Աստուծոյ ոտքը  
 իյնիմ , ըսաւ Տօմաս , և բոլոր օրը երկուքն  
 ալ աղօթքով անցուցին :

Արկրորդ առաւօտը նախ Յակոբ ար-  
 թընցաւ , և ուրախութեամբ Տօմասին  
 վրայ կը նայէր՝ որ շատ տարիներէ վերջը  
 ասանկ անուշ քուն չէր քաշած , սկսաւ  
 ինքն իրեն ըսել . “ Առաքինութիւնը ո՞ր  
 է , մոլութիւնը ո՞ր . քանի որ միտքս կու

դայ այն գիշերը որ տարի մը առաջ թու-  
մասին հետ անցուցի բոլոր դող կ'ել-  
լամ. ան ատեն մեղքերուն գէշութիւնը  
ասոր երեսին վրայ կը տեսնայի, իսկ այսօր  
երեսէն կ'երևնայ որ ինչուան որ քունը  
տարեր է զՆստուած կը մտածէ եղեր,, :  
Թումաս ուրախ ու հանգիստ սրտով ար-  
թընցաւ, ու մէկէն սկսաւ շնորհակալ ըլ-  
լալ Յակոբին ըսելով, թէ “ Բասն տա-  
րի է որ ասանկ անուշ ու հանգիստ քուն  
սենեցած չէի. ինչպէս մարդուն հողին  
երբ հանդարտ ըլլայ, մարմինն ալ խաղաղ  
կ'ըլլայ,, : Յակոբ ալ ըսաւ, “ Այս հիմայ  
կ'երթամ, որ դու առաւօտեան աղօթքներդ  
ընես,, : — Թումաս ալ անանկ ուրախու-  
թեամբ աղօթք կ'ընէր, ինչպէս որ պզտի-  
կուց ըրեր էր : Աբբօր նորէն Յակոբ եկաւ .  
Թումաս ըսաւ . Այսօր իմացայ որ առա-  
ւօտուան աղօթքին պէս աղէկ բան չկայ .  
ինչպէս որ արևուն առջի ճառագայթները  
բոլոր աշխարհքս կը զուարթացնեն, ա-  
սանկ ալ առաւօտեան աղօթքները՝ մեր հո-  
գին : “ Բայց հիմայ սա պտուղները պիտի  
ուտես, վասն զի քեզի համար դացի վրն-  
տուցի, վերջը քեզի բան մը պիտի սկստ-

մեծ՝ որ շատ ուրախանաս ,, : — Թումաս  
երբոր կերաւ լըմնցուց , ըսաւ Յակոբ .  
“ Սա սլատկերքը կը տեսնանս , քու հոս  
եկած օրուանդ առջի իրիկունը ինձի բերաւ  
զանիկայ մեր ժողովրդապետը , որ մէկ  
զարմանալի քահանայ մըն է , սլատկերն ալ  
ինքը քաշեր է : “ Աս շատ անգամ նկա-  
րած հովիւ սլատկերքի մէջ տեսեր եմ , ըսաւ  
Թումաս , բայց ասանկ աղուորը դեռ չեմ  
տեսած . ատ երկու գայլերը ի՞նչ կը ցուցը-  
նեն , և անոնց մէկը ոչխար դարցած հովուին  
ուսը , մէկալը դեռ գայլ է . աս ի՞նչ ըսել  
կ’ուզէ ,, : Յակոբ ալ սլատկեց տեսած երա-  
զը , ու ըսաւ , “ Ահա անոր սլատկերն է ա-  
սիկայ ,, : — Ա՛նանկ է նէ՛ կես եմ այս գայ-  
լը , հա՛ : — Բայց հիմայ դու ալ ոչխար  
դարձար : — Ա՛հ Յիսուս շնորհակալ եմ  
քեզի՝ որ ինձի ասանկ մեծ բարիք ըրիր .  
բոլոր կենացս մէջ քեզի շնորհակալ պիտի  
ըլլամ , և այս քարայրիս մէջ՝ ուր որ զիս  
գայլէ՛ն փոխեցիր ոչխար ըրիր , բոլոր կեանքս  
զղջումով պիտի անցնեմ : — “ Ա,ախ պէտք  
է ընդհանրական խոստովանանքի սլատ-  
րաստութիւն տեսնաս , վերջը կ’իմանաս  
թէ՛ հոգիդ ի՞նչպէ՛ս կը մխիթարուի անով .

մեր սլատուական ժողովրդասպիան ալ ա-  
նանկ աղէկ և անուշ բնութեամբ մարդ մըն  
է, որ կրնամ ըսել թէ մեղաւորները իր  
ուսին վրայ կ'առնու ու շխտակ ճամբան  
կը հանէ, ու ճշմարիտ հովուին պէս իր  
հօտին մէջ կը խառնէ :

Արեմն ես ալ իրեն սլատամեմ ինչ գայլ  
ըլլայ : — Աս պիտի երթամ իրեն շնոր-  
հակալ ըլլալու աս սլատիկերքին համար .  
դու ալ կ'ուզես նէ՛ եկուք հետս : — Ին-  
չու չէ, ես ալ կու գամ, ու իրեն կ'ըսեմ  
լալով, թէ անտառին մէջի քարայրը փա-  
րախ դարձեր է, չէ թէ ոչխարներու՝ հա-  
սլա ապաշխարողներու : — Ախ Յոհան-  
նէսին տունը հանգըպինք որ մեզի կերա-  
կուր կը բերէ՛ կրնամ ըսել թէ ատ մարդը  
իմ քարայրս բնակարան դարձուց, առաջ  
ասանկ չէր :

Արիութն ալ քարայրէն ելան ու սկը-  
տան Յոհաննէսին երթալ . անիկայ հե-  
ռուէն տեսաւ որ կուզան, գնաց դրանը  
մէջ կեցաւ, որ զիրենք ընդունի երբ քիչ մը  
մօտեցան՝ Յակոբ անոր կանչելով ըսաւ .  
« Յոհաննէս, Աստուած ձեր աղօթ-  
քին ալ իմ աղօթքիս ալ ըսից, ահա

գայլը ոչխար դարձած կը բերեմ ձեզի ,, :  
— Ամէն տընեցիք վար թափեցան , ուրախութիւնէն չէին գիտեր ինչ ընեն . տղաքը սկսան ցատքուտել : Յակոբ ըսաւ Յոհաննէսին . “ Դուն ալ հետերնիս եկու որ ժողովրդապետին աւետիս տաս , ինքը աղէկ հովիւ մըն է , երբոր տեսնայ , աս ոչխարը որ շատոնցուրնէ 'ի վեր կորսուեր էր , շատ պիտի ուրախանայ ,, : Յոհաննէս նոր զգեստները հագաւ , և կիրակի օրուան զլիսարկը դրաւ , երկու ձգնաւորներուն հետ սկսաւ երթալ : Կ'սոնց երթալէն վերջը՝ Կարողոս մօրը ըսաւ , “ Թէ որ ասանկ գէշ մարդիկ իրեք օրուան մէջ ասանկ աղէկ կ'ըլան , պէտք չէ ամենևին զուրիշը արհամարհել ,, : Գետին մէջը ուլ որ կը տեսնար աս իրեքը՝ զարմացած կը մնային , մանաւանդ երբոր Յովհաննէսը նոր ըստերով կը տեսնէին : Քահանային տունը հասան չի հասան Յովհաննէս ըսաւ . “ Հայր սուրբ , աս օրուան ուրախութիւնս հարսնիքի ուրախութենէն մեծ է : — Մէկալ գայլն ալ , կանչեց Յակոբ , ոչխար եղեր է . և կ'ուզէ ինձի հետ բնակիլ ,, : Թափառն ալ ըլլով ըսաւ ժողովրդապետին . “ Օխ



ալ ճշմարիտ հովուին սէս ուսերնուդ  
վրայ առէք, վասն զի ես ալ ինքս զինքս  
դտայ ու Աստուծմէ ներումն կը խնդրեմ՝  
ըրած մեղքերուս վրայ,, : — Քահանայն  
արցունք թափելով (Թումասին ձեռքէն բրո-  
նեց ու ըսաւ . “ Ասկէ վերջը Յակոբն ալ  
դուն ալ իմ դիմացս հաւասար էք, բայց  
Աստուծոյ սէտք է փառք տանք՝ որ զձեզ  
դարձուց ոչխար ըրաւ, վաղը ես պատա-  
րագս կ'ընեմ Աստուծոյ շնորհակալութեան  
համար, որ այսպիսի հրաշք դործեց, ու  
կը խնդրեմ իրմէ՝ որ ալ աւելի զձեզ լուսա-  
ւորէ : Արբոր անառակ որդին հօրը տունը  
դարձաւ, հայրը մեծ հարկինք ըրաւ . Աս-  
տուած ալ զիս ձեզի հայր դրեր է, անոր  
համար իրեքնիդ ալ կը հրաւիրեմ իմ սե-  
ղանս ,, :

Խոստովանանքէն և սրբութենէն վերջը՝  
կերակուրի ատեն Յակոբ սրատմեց՝ թէ  
ի՞նչ վարպետութեամբ Թումասը դարձուց :

Երբ զվրդապետը շատ ուրախացաւ,  
մանաւանդ երբոր ընց թէ իր նկարած  
պատկերքը ի՞նչպէս աղէկ բանի եկեր է, և  
խոստացաւ Յակոբին որ ուրիշ ալ նկարէ,  
անոնցմէ մէկն ալ Թումասին դարձը ըլլայ,, :

Անկէ ետե Յակօբ ու թաւմաս ան քար  
այրին մջ խիտ ճգնութեամբ ապրեցան  
ինչուան մահերնին : Իրենց անցած ու նոր  
կեանքերուն սլատմութիւնը ամէն դի սլատ  
մուեցաւ , և որչափ որ առաջուց մնաս  
տուեր էին՝ իրենց ապաշխարութեամբը ա  
մէնն ալ ետ դարձուցին : Այս թաւմաս  
մուտաւ . Յակօբ շատ տարիներ ալ ապրե  
ցաւ , բայց երիտասարդութեան ատենը  
ըրած մեղքերը միշտ կու լար : Աւ երբոր  
եկաւ այն օրը որ իր սուրբ մահը յայտնող  
զանգակին ձայնը կը լսուէր , աս երգը  
երգեցին ,

Անցանք մենք երկրէս  
Փուճ շուքի մը սէս .

Ա՛հ ինչո՞ւ համար  
Ակեր եմք աշխարհ : —

Որ մեռնինք երթանք  
Պերեզման ինջնանք  
Բայց մահն երբ կու գայ  
Պիտցող մ'ալ չի կայ :

Խեղացի է ան

Որ սպասէ մահուան ,  
Ըմէն ժամ սրտորատտ  
Ըրթուն և ըզգաստ :

Կեանքը՝ բոց մըն է ,  
Հով մ'ալ կ'անցընէ .  
Ո՛վ մարդ դուն ինչո՞ւ  
Սիրոյ ու սրտուոյ

Ետեւէ կ'երթաս  
Որ իբրև երազ  
Կ'անցնին աս տեղէն ,  
Դու ալ ետեւէն :

Թուա Յակոբ երկինք իր հին բաշտակաւնին քով . երկուքն ալ Աստուծոյ երանութեանը մէջ մոռցան ան շարչարանքնեքը՝ որ պիտի քաշէին իրենց մեղքերը քաւելու համար . իրենց քաջութեամբ համբերելը ան քարայրին մէջ , շատ մեղաւորներու վրայ մեծ տալաւորութիւն ըրաւ , որ գէշ ճամբանին թողուցին , ու սոցաշխարող եղան : Իսկ իրենց բնակած քարայրը որ տեսակ տեսակ ճգնութեամբ սուրբ տեղ մը դարձուցեր էին , չի մոռցուելու համար ,

ջերմեռանդ քրիստոնեայք ժայռին վրայ  
երկու խաչ անկեցին . տակն ալ անոնց  
զղջման պատմութիւնը գրեցին , որ ետեւի  
եկողներուն յիշատակ մնայ : Ալ անկէ  
վերջը ուրիշ շատ ապաշխարողներ ալ աս  
քարայրին մէջ քաշուած , իրենց մեղքերը  
լացին ու ապաշխարեցին . անոր համար տե-  
ղոյն անունն ալ մնայ , Քարայր ապաշ-  
խարոշքեան :



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.




## Յ Ա Ն Կ Դ Ի Լ Խ Ո Յ




ԳԼ.	Յ.	Երկու խաբեբայք . . .	5
ԳԼ.	Բ.	Անտառին մէջի Քարայրը .	18
ԳԼ.	Գ.	Առանձնութիւն ու զըզ Զումն . . . . .	37
ԳԼ.	Դ.	Պատկերներ . . . . .	47
ԳԼ.	Ե.	Չմեռ . . . . .	61
ԳԼ.	Զ.	Երկու ճգնաւորներ . . .	69











363

